№ 4 (231) XXIII ՏԱՐԻ ԱՊՐԻԼ 1913

„Droschak"
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

ԴՐՕՇԱԿ

Adresse:
RÉDACTION DU JOURNAL
„Droschak"
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ" ՕՐԳԱՆ

ՄԱՀԱԲԵՐ ՊԱՏՐԱՆՔ

Ցրենք վերջապէս մահաբեր պատրանքը! Ժամանակ է նողկանքով երես դարձնենք թիւրք պաշտօնական շողոքորթ ժպիտներից, որոնք ամենէն վտանգաւոր դաւերն եղան մեր ժողովրդի գոյութեան դէմ։ Երիտասարդ Թիւրքը կառավարութիւնը չորս տարուց ի վեր քայլ առ քայլ, սիստեմատիկ կերպով կատարեց բոլորը, ինչ պէտք էր մեր անկեղծ հաւատի թեւերը բրտօրէն փետելու, մեր անվերապահ ու շիտակ վստահութիւնը արիւնի մէջ տրորելու և իրաւունքի ու արդարութեան մեր յոյսերը ոճրաշունչ ցուրտ հողմերին տալու համար։

Ոչ մի դառնութիւն չմնաց, որ չճաշակէինք և ոչ մի ցեղային անարգանք, նեաստացումն, որին չենթարկուէր հայ ժողովրդի արդարամիտ համբերութիւնը։ „Սահմանադրական" Թիւրքիան, Աբդիւլ-Համիդի չարակամութեամբ ու դիւական եռանդով զինուած, բայց նրանից աւելի նենգօրէն և աւելի մեթոդով այս չորս տարում հայ ժողովրդի արիւնը ծծեց վամպիրի պէս, նրա անդարձ կորստեան վիհը փորեց և մենք՝ ազնուօրէն դիւրահաւատներ, պատրանքներով աչքերնիս շլացած՝ անզգալիօրէն քայլ առ քայլ դէպի այդ ճակատագրական անդունդը դիմեցինք։

Ցրենք վերջապէս այդ մահաբեր պատրանքը!

Հեռաբենք մեզ և չխաբուինք ուրիշներից։

Այսօր ճակատ առ ճակատ կանգնած ենք ամենադաժան, սարսեցուցիչ առեղծուածի առաջ։ Հայ ժողովրդի լինել չլինելու խնդիրն է հրապարակի վրայ. կամ այսօր նա պիտի ապահովի իր ազգային գոյութիւնը իրական երաշխիքներով կամ պիտի պատրաստուի, որպէս քաւութեան նոխազ, վերան Թիւրքիայի աւերակների տակ թաղուել։

Միջին ճամբայ, միջին ելք չկայ։

Արիւնոտ մղձաւանջը կրկին թանձրանում է ու ծանրանում և հին Եղեռնը իր կարմիր աչքերը վերստին մեխել է հայի տառապած թիկունքին։ Խաւարի մէջ դարբնուող դժոխային դաւը հայ ժողովրդի դէմ այլ ևս գաղտնիք չէ, Թիւրք կառավարութիւնը — երիտասարդ Թիւրքե՞ր—այլ ևս պէտք չի զգում սքօղել նիւթուող ոճիրը։ Ներքին գործոց նախարար Հաճի Ադիլ բէյ, որ դեռ երէկ Պոլսից Ադանայի ջարդի ազդանշանն էր տալիս իր դիւական հեռագրով և որի խղճի վրայ տակաւին եռում է քսան հազար անմեղ հայերի տաք արիւնը, այսօր էլ ջարդերի սպառնալիքի, այս սոսկումների օրերում, դրութեան տէրն է։

Ի՞նչ եղեռնական զուգադիպութիւն...

Եւ սրան՝ Ադանայի այս գարշելի արնպարին է գնում պատմելու հայի տառապանքը հայ պատգամաւորութիւնը։ Ու Հաճի Ադիլ բէյ մի ցինիզմով՝ որ իր միակ ու տխուր պատիւն է, հրաժարւում է լսել հայ աշխարհի ցաւագին ճիչը, որովհետև նա առանց այն էլ գիտէ, ծանօթ է, իր և իր ընկերակիցների գործունէութեան անխուսափելի արդիւնքին։ Զգիտես հայ պատգամաւորութեան անյոյս անճարակութեան, նրա աններելի լաւատեսութեան վրայ զարմանա՞լ, թէ Թիւրք նախարարի լպիրշ բացերեսութեան։

Մէկի սարկամիտ, անարի մտայնութիւնը, միւսի անպատկառութիւնն արժէ։

Չորս տարուց ի վեր հայ ժողովուրդն ապրում է ամենօրեայ անարգանքի, սոսկումների ու արիւնի մէջ, շնորհիւ Հաճի Ադիլ բէյերի և հայ պատգամաւորութիւնը դեռ հնարաւոր է համարում այդ դահիճներին մեր նիւրական տառապանքը պատմել։

Չորս տարուց ի վեր՝ ինչպէս Կարմիր Սուլթանի օրով, հայ աշխարհի մի ծայրից միւսը՝ կանանց առևանգումը ու բռնի իսլամացումն, սպանութիւններ ու գաղթ, հաբրստահարութիւն ու հողերի գրաւում յաջորդում են իրար ամեն օր քրդական հօրդաներ ու կառավարական պաշտօնեաներ, իսլամ խուժան ու զինուորականներ ձեռք ձեռքի տուած ոճրագործ եռանդով, անպատիժ առաջ են տանում հայ աշխարհի աւերածի գործը և հայ պատգամաւորութիւնը գնում է արդարութիւն հայցելու Հաճի Ադիլ բէյից, որի ձեռքերի վրայ դեռ չեն չորացել Ադանայի հայ մանուկների արիւնը։

Եւ հայակեր նախարարը մերժում է լսել այդ ամօթալի, այդ նեաստացուցիչ աղերսը։ Իրաւունք ունի. ջարդարարին չեն դիմի արդարադատութիւն և իրաւունք փնտրելու, ինչպէս գայլից չեն հայցում գառների փրկութիւնը։

Թիւրիմացութիւն չկայ. ցրենք պատրանքը և աչքերնիս լայն բանանք։ Երիտասարդ Թիւրք կառավարութիւնը,

որի թերևս հարազատագոյն ներկայացուցիչն է Հաճի Ադիլ բէյ, բացարձակ կերպով հետապնդում է մի նպատակ, որ դեռ Արդիւլ-Համիդն է ծրագրել—շտապով դատարկել Հայաստանը հայերից հրով ու սրով, հայ գաւառները լցնել մուհաճիրներով և իսլամական միապաղաղ, կուռ պետութիւն ստեղծել։ Դրա համար, քաղաքական այդ նենգ նպատակին հասնելու համար են կոտորում, թալանում հայերին, իսլամացնում հայ կանանց, գրաւում հայ հողերը. դրա համար են զինում, կազմակերպում քրդական հրոսակները, անօրինակ ապօրինի հարկերով աւերում հայի տնտեսութիւնը. դրա համար են խլում հայի ինքնապաշտպանութեան յետին զէնքը, զինաթափութեան անունով փճացնում, կամ ցրում, հեռացնում երկրից ողջ երիտասարդ հայ սերունդը։ Եւ քաղաքական այս անասելի ոճիրը յաջողութեամբ գլուխ տանելու և արտաքին արգելքները վերացնելու համար նոյն թիւրք պօլիտիկանները եւրոպական կաբինետների շէմքերն են մաշում և աշխարհի հզօրներին „բախշիշներ“ բաժանում Պարսից ծոցից՝ մինչև Ադանա ու Մերսին, Տրապիզոնից մինչև Սիրիա ու Արաբիա։

Երեսուն տարուայ carte blanche են խնդրում մեծ պետութիւններից Հայաստանը դատարկելու և թիւրք մուհաճիրներով լցնելու համար։

Իմաստո՞ւն է այս քաղաքականութիւնը նոյնիսկ թիւրք պետականութեան տեսակէտից, հնարաւո՞ր է ոճիրներով, աւերածով թիւրքիայի վերածնութիւն, դա այլ խնդիր է։ Թիւրքական հինաւուրց տխուր մտայնութիւնը այս հարցերին տուել է դրական պատասխան. թիւրքական ամբողջ պատմութիւնը ջարդից դուրս այլ պետական ըմբռնում չի ճանաչել, իսլամականից դուրս՝ այլ սկզբունքով չի առաջնորդուել։

Ջարդ ու իսլամ...

Այսօր էլ այս մարտակոչն է, որ բթամիտ, յանցաւոր յամառութեամբ ոռնում է թիւրքօ-քրդական խուժանը, հնազանդ Պոլսի պօլիտիկանների թելադրանքին, երբ արդարութեան և իրաւունքի խօսք է բաց անում բոյան։

Անօգուտ է, ի զուր է պետական առողջ տրամաբանութեան, պատմական երկաթէ օրէնքների, պետական աւելի արդար ու աւելի հաստատուն ըմբռնումների դասեր տալ, քարոզներ կարդալ „ջարդ ու իսլամ“ սկզբունքով դաստիարակուած թիւրք վարիչներին։ Գլուխներ կան, որոնց խորքում իշխող խաւարը ամենավառ լոյսերի ցոլքերի հանդէպ աւելի դիմացկուն է, քան բարձրագոյն լեռնակատարների յաւերժական ձիւնը արևի շողքերի առաջ։ Այսպէս են թիւրք պետական գլուխները, որոնց վրայից, ինչպէս ժայռերի վրայից՝ ծովի ալիքները, անցել են դարերի փորձութիւնները առանց իմաստութեան հետք թողնելու։

Քարացած այս մտայնութեան հանդէպ անօգուտ է խորհուրդը, անզօր խրատը, ամենաիմաստուն ու բարեացակամ խրատն ու խորհուրդը։

Պիտի կարողանա՞ն արդեօք թիւրք մոլի վարիչները իրենց իսլամական ուշացած ցնորքն իրագործել, պիտի յաջողեցնե՞ն արդեօք թիւրքիայի գահավէժ կործանումը խափանել և մի ամբողջ ժողովրդի՝ հայ ժողովրդի՝ բնաջնջումով ու արիւնով ամրապնդել ու վերստեղծել մի կուռ մահմեդական պետութիւն։ Սա մի հարց է, որի մասին մարգարէանալու պատիւը ձգում ենք երիտասարդ թիւրքերին։

Ինչոր սակայն հաստատապէս կարելի է պնդել, այդ այն է, որ երիտասարդ՝ թէ հին թիւրքեր ապահովապէս պիտի յաջողցնեն հայերի բնաջնջումը, Հայաստանի անդարձ աւերածը, եթէ Հաճի Ադիլ բէյերին հնար տրուի նոյն տէմպով, նոյն անպատիժ յանդգնութեամբ առաջ տանել իրենց բարբարոս գործունէութիւնը և եթէ աւելի զօրաւոր, աւելի արդար ֆակտորներ չգան բռնելու այս մարդակերների յանցաւոր բազուկները, սանձելու աւերիչ կատաղութիւնը, խափանելու այս չարագործ, այս արիւնոտ քաղաքականութիւնը։

Անօգուտ է պատրանքը և ժամանակ է դէն շպրտել կեղծիքի, ժպիտների, նենգ հաճոյախօսութեան ու շողոքորթութեան դաւաճան քօղը և բաց աչքով նայել մեր ցեղային գոյութեան սպառնացող ահռելի վտանգին, որ մեր դուռն է բաղխում, հայի աւեր ու խոպան խրճթի դուռը։

Եւ եթէ տակաւին հնարաւոր է տեսակցութիւն, խօսք ու զրոյց թիւրք նախարարների հետ, ապա դա պիտի լինի վերջին անգամ և միայն ասելու համար հետևեալը.

„Լսեցէք փաշա՛, և՛ դուք և՛ ձեր բոլոր նախորդ ու յետնորդ փաշաներ ու բէյեր. հարիւր հազարաւոր զոհերից յետոյ՝ մենք դարձեալ անկեղծօրէն մեր բախտը կապեցինք ձեր բախտին և մեր շահը այս պետութեան բարգաւաճման մէջ փնտրեցինք։ Մեր վաստակից, մեր արդար քրտինքից յետոյ՝ այս երկրին զոհաբերեցինք նաև մեր զաւակների արիւնը, որ այնպէս առատօրէն հոսեց պատերազմի դաշտերում։ Հիտակ ու անձնուէր քաղաքացիներ եղանք ու խղճմիտ, օրինապահ անգամ բացարձակ ապօրինութիւնների ու անսանձ անիշխանութեան այս օրերում։ Արդարութեան վիրաւոր զգացումները մեր հոգում և ըմբոստութեան ճիչը մեր շրթունքներին խեղդեցինք մի անօգուտ ու անպտուղ համբերութեան ապաստանած։

„Եւ մենք խաբուեցինք ամենաանարգ, ամենատմարդի կերպով։ Արդ այսուհետև անօգուտ են մեր անկեղծ ճիգերն ու զոհաբերութիւնները, քանի որ դուք հակադրում էք թիւրք պետութեան շահերը, մեր ազգային գոյութիւնը. ի զուր մեր շիտակութիւնը, երբ մեր չորս կողմում միայն կեղծիք է, խաբեբայութիւն, դաւաճանութիւն։

„Շենք հաւատում ձեզ, ձեր խոստմանը, ձեր անուշ խօսքերին, մանաւանդ ձեր ժպիտներին, որովհետև դառն փորձով գիտենք այդ բոլորի արժէքը, որովհետև ձեր իւրաքանչիւր խօսք ու ժպիտից յետոյ, ձեր իւրա-

քանչիւր խոստումից յետոյ՝ հայ աշխարհում մի քանի տներ են աւերւում, մի քանի անմեղներ խողխողւում, մի քանի կանայք առևանգւում։ Եւ որչափ մեծ է „անկեղծութիւնը“ ձեր խոստման, նոյնքան մեծ ու բազմազան են լինում հայութեան դէմ գործած ոճիրները։

„Չենք հաւատում ձեզ, և այլ ևս չենք կարող հաւատալ, որովհետև հակառակ ձեր խոստման և մեր դիւրահաւատութեան, դուք Աբդիւլ-Համիդի հաւատարիմ ժառանգորդները, եռանդուն աշակերտները հանդիսացաք։

„Չենք հաւատում ձեզ և չենք կարող հաւատալ, քանի որ ձեր պետական ըմբռնումը միայն ոճիր է, ձեր մտայնութիւնը՝ միմիայն իսլամական, ձեր հետապնդած քաղաքականութիւնը՝ վայրագ, անողորմ, յանցագործ, որ մեր ժողովրդին կորստեան անդունդն է փորում։

„Չենք հաւատում ձեզ, չենք կարող այսուհետև ձեզ վստահիլ հայ ժողովրդի ապագան և նրա փրկութիւնը փնտրելու ենք միմիայն Եւրոպայի խոստացած իրական երաշխիքների մէջ, որովհետև ձեր ծրագրած ռէֆորմները մեզ սոսկում են ազդում, որովհետև մենք մի անգամ արդէն ճաշակել ենք այդ ռէֆորմների դառն պտուղները 1895—96 թուերին ձեր արժանաւոր նախորդ Շաքիր փաշայի ձեռքով“։

Ահա թէ ինչ պիտի ասի թիւրք կառավարութեան։ Եւ մի ազգային ժողով, որ ազգային այս եզակի ու վերջնական տագնապին անկարող է, արիութիւն չունի այս լեզուն գործածել և պիտի ցածրէն գնայ Հաճի Ադիլ բէյերի արդարադատութեան զգացմունքին դիմելու, այդպիսի ազգային ժողովը երկչոտների մի տխուր ու անպատիւ համախմբումն է։

Ցրենք վերջապէս մահացու պատրանքը!

ՐԱՖՖԻ

(ՄԱՀԻԱՆ ՔՍԱՆԵՀԻՆԳ-ԱՄԵԱԿԻՆ)

—

Քսանեհինգ տարի առաջ էր և սակայն՝ յիշում եմ ինչպէս այսօր հայ գրականութեան տիտանի, հայկական շարժման հոյակապ ռահվիրայի մահը։ Այն ժամանակւայ գիտակից սերունդի համար Ռաֆֆիի մահուան լուրը ազգային մի նշանաւոր գործչի կորստեան բօթը չէր միայն, այլ մի ահագին շշմեցուցիչ աղէտի ահազանգ, որ լայն արձագանքներով փուեց ու հասաւ գաւառները, թափանցեց հեռաւոր խրճիթները, ուր կար թէկուզ մի հատիկ գրագէտ ու գիտակից հայ։ Կովկասահայ մտաւոր կենտրոնի—Թիֆլիսի զգացած ցնցող խռովքը լայն ծփանքներով կրկնուեց գրեթէ իւրաքանչիւր գաւառական հայ կենտրոնում և երիտասարդ հոգիների մէջ գաղափարական խուճապի ասեմ, թէ տագնապի կերպարանք առաւ։

Մենք՝ գաւառի մտաւորականներս, որ յաճախ պարբերական թերթերից դուրս՝ մտաւոր այլ սնունդ չունէինք, տարիներ շարունակ ապրել էինք Ռաֆֆին, զգացել, խորհել Ռաֆֆին։ Տարիներ շարունակ նրա անունով կախարդուած՝ լուռ, երկիւղած, յափշտակութեամբ ընթացել էինք նրա յետևից ու թերթից թերթ էինք անցել, նայելով, թէ ո՞ւր էին լոյս տեսնում նրա գլուխ գործոցները։ Քննադատութիւն չկար, մեր փոյթը չէր, թէ ինչո՞ւ Վարպետը „Արձագանք“ թերթից „Մշակ“ և յաճախ սրանից էլ կրկին առաջինին է դառնում, հակառակ նրանց հակոտնեայ ուղղութեան։ Մշակական էինք յամառ, անվերապահ, Արծրունու մոլի պաշտողներ, բայց պէտք էր կարդալ Ռաֆֆին, ուր և գրելու լինէր նա։ Մեն-մենակ, ինչպէս արծիւ՝ նա իշխում էր հայ գրական բարձունքների վրայ և այնտեղից նրա խօսքը վարարուն յորձանքներով իջնում, ողողում էր հայ կեանքի ամենամթին խորշերը։ Ռաֆֆին ինքնին մի հսկայ երևոյթ էր, հայ կեանքի ամենէն ցայտուն, ամենէն պարարիչ երևոյթը, որին ակնապիշ յառած էին այնքան հայեացքներ։ Եւ անհնարին էր երևակայել հայ իրականութիւնն առանց Ռաֆֆիի, ինչպէս անկարելի է տաճարի պաշտամունք, առանց քուրմի։ Ռաֆֆին Արծրունու պէս ուրթսունական թուականների քուրմն էր։ Ռաֆֆի և Արծրունի մեզ գաւառական մտաւորականներիս համար հոմազոր, համարժէք էին. մէկն իբրև վիպագիր, միւսն՝ իբրև հրապարակախօս։



Մի հրապուրիչ պատրանք, որ հիւսւել էր Ռաֆֆիի անուան, նրա երկերի, նրա խոհերի շուրջը, պաշարել էր նաև ընթերցող սերունդին. ու թւում էր, թէ Ռաֆֆին, իր մոգական գրչի հզօր թափով, առանց որևէ կողմնակի

ճիգերի, օր աւուր, քայլ առ քայլ մեզ մօտեցնում է Մեծ Գաղափարին, վերից՝ վար, յեղաշրջում, վերստեղծում է հայ կեանքը, խտացնում, շօշափելի է դարձնում մեր հոգիներում տարտամօրէն յեղյեղուող գիւթական երազները։ Թւում էր, թէ Րաֆֆին չպիտի մեռնի, նա չի կարող մեռնել, մինչև չտեսնի իր հսկայ գաղափարի իրագործումը, հայ աշխարհի արշալոյսը, որ կարծես ինքն էր դուրս բաշում իր մոգական խօսքի զօրութեամբ, իր հերոսների անընկճելի կամքով։

Եւ քանի կենդանի էր նա, քանի հնչւում էր նրա սրտապարար, գիւթիչ ձայնը, այնպէս մօտ, այնպէս հեշտ էր թւում այդ բոլորը։

Ահա թէ ինչու նրա յեղակարծ, յանկարծահաս մահը կսկիծից աւելի խորունկ ապշութիւն ու զարմանք յարուցեց մեր մատաղ հոգիներում։ Մենք՝ որ մանուկ ու բուռն հաւատով փարել էինք նրա անւան, որպէս լուսատու փարոսին, մենք՝ որ տակաւին անկարող էինք զատել գաղափարական քարոզը կենդանի իրականութիւնից ու նրա հերոսների, նրա մարտնչողների հետ արդէն խելայեղօրէն ապրում էինք ազատութեան յաղթանակները հայկական բարձունքների վրայ, յանկարծակիի եկանք, շւարուն մնացինք հայ կեանքի վիթխարի քաղաքական առեղծուածի առաջ, երբ այլ ևս չկար մեծ պատգամախօսը։

Րաֆֆին մեռա՞ծ... ապա մեր երա՞զը... մեր մեծ երազը, ազգային ազատագրումը, որ այնպէս սերտ կերպով հիւսուած էր նրա անուան։

Րաֆֆիի հետ մենք մանկօրէն ապրել էինք յափշտակիչ ցնորքներով, նրա մահով վրայ հասաւ ցուրտ, խոհուն զգաստութիւնը։ Քարոզիչը չկար այլ ևս, բայց կար նրա խօսքը, հզօր, անդիմադրելի ու այնպէս կախարդիչ։ Ապա կամաց կամաց ցրիւ եկաւ մշուշը, և Մեծ Գաղափարը յստակօրէն ծրագրւեց մռայլ ֆօնի վրայ։ Տարիների թովիչ պատկանքը շամանդաղի պէս տեղի տւեց պաղ մտածումին ու պարզւեց հեռանկարը— մի ստրկացած, հարստահարւած, աւեր աշխարհ, մի տրորւած, տառապող ժողովուրդ, որ անյայտութեան ու խաւարի մէջ հեծեծում է ու մեռնում հնազանդ իր սև ճակատագրին, Րաֆֆին չէր փրկել այդ աշխարհը, այդ ժողովուրդը, Րաֆֆին փրկութեան կոչն էր, կեանքի մի հզօր աղաղակ։ Ընորհիւ Րաֆֆիի, հեռանկարը թէև դաժան, բայց էլ խաւար չէր. և այդ հեռանկարի վրայ այժմ բարձրանում էր մի կուռ մտածում, մի հուժկու, հպարտ կամք, որ ճգնում էր լինել և որ տիրաբար իշխում էր մեր հոգիների վրայ, մեր լաւագոյն կորովը մարակում, մեր ամենէն ըմբոստ իղձերը կերտում, կաղապարում։

Րաֆֆիի շունչն էր այն...

Եւ դալուկ, դանդաղաշարժ մասսաների ծոցից իսկ եռում, բարձրանում էին կարօնները, Ասլանները, Խենդերը, Որսորդ Աւօները, ինչպէս մարմարի կոշտ զանգւածներից ճարտար վարպետի հարւածների տակից բարձրանում են հոյակապ ձևերը, այն անգամ կենդանի, իրական և ոչ մտացածին։

Եւ անակնկալ կանխահաս մահը վաղաժամ խլելով Րաֆֆիին հայ իրականութիւնից, փայլուն լուսապսակով պատեց նրա խոհուն ճակատը ու նրա հրաշակերտ խօսքը դարձրեց էլ աւելի հմայիչ, էլ աւելի տիրական ու խորհրդաւոր։

Համարձակ կը լինի՞ արդեօք ասել, որ այսօր էլ, ինչպէս քսանևհինգ տարի առաջ, Րաֆֆին տակաւին չի կորցրել իր հրապոյրը, որ նա շարունակում է իշխել մեր անձնուրաց, գաղափարապաշտ սերնդի ամենէն առողջ մտածումների, ամենէն հարազատ ներշնչումների վրայ և որպէս գաղափարաքարոզ վարպետ տակաւին չի զիջել իր տեղը որևէ այլ գրագէտի։

***

Ո՞ւր է գաղտնիքը այս սքանչելի կախարդանքի. ինչո՞վ այս եզակի մարդը կարողացաւ այնքան երիտասարդ կամքեր թովել, այնքան կորովի ձգտումներ յարուցանել նոյնիսկ ամբոխների ծոցում. ինչպէ՞ս կարողացաւ նա այնքան մատաղ հոգիները գերել ու փարել ըստ իր քմահաճոյքի, զոհաբերութեան պաշտամունքը, կեանքի գերագոյն իդէալ ու խորհուրդը դարձնել և նրա առաջ ծունկի բերել հայ աշխարհի ամենէն ընտիր զաւակներին։

Րաֆֆիի խոշոր ազդեցութիւնը ոչ նրա երկերի գեղարւեստական բարձր արժանիքի մէջ պիտի փնտրել, ոչ նրանց վարպետ, յափշտակիչ կառուցւածքի և ոչ այն յստակ, պարզ, հասկանալի լեզուի, որ հաւասարապէս մատչելի է գրագէտին ու ռամիկին։

Նրա բարձր արժանիքը, նրա անօրինակ հմայքը փնտրելու է նրա իդէականութեան մէջ, որ այնպէս զուգադիպում, նոյնանում էր հայ ժողովրդի հոգում կերպարանաւորուող կարելիութիւնների, ձևակերպւող մտորումների հետ։ Մեծաքանքար ու բեղմնաւոր միպագրից աւելի՝ նա մի տեսող էր, յստակ ու խորաթափանց հայեացքով։ Եւ նոյն հոյակապ իմաստութեամբ, որ յատուկ է իսկական տեսողներին՝ Րաֆֆին,—ինչպէս և հայ շարժման ողջ պլէադը, Գամառ-Քաթիպա, Արծրունի, Խրիմեան ու Վարժապետեան—կարողացաւ ընտրել իր խօսքը, և այդ խօսքն արտասանելու ճիշտ մօմենտը։ Նա իր ցեղի վիրաւոր խղճի արտասովոր խտացումն եղաւ, ուր եկան բեկբեկւելու, արտացոլելու հայ ազգի նորագոյն ու լաւագոյն ձգտումները, նրա նոր հաւատամքը, նրա սնուցած յոյսերը։ Իր երկերի խոհուն խաղաղութեան մէջ, առանց կրքոտ բաղխումների առանց աղմուկի, գրեթէ բնազդօրէն, նա կարողացաւ հայ ժողովուրդի տառապանքի խորութիւնը չափել, հինաւուրց վէրքը լայն բանալ և որ գլխաւորն է, սպե-

ղանին, փրկութեան իրական ճամբան ցոյց տալ իր առնական ըմբռնումով։

Անկասկած՝ Րաֆֆին մենակ չէր որպէս ազգային Մեծ Գաղափարի քարոզիչ ու դարբնող. ժողովուրդների կեանքի պատմական խոշոր շրջանները մի անհատի գործ չեն, որքան և հանճարեղ լինի նա. հայ բանաստեղծութիւնը, հայ ժողովրդական երգը, հայ հրապարակախօսութիւնը և նոյնիսկ հայ հոգևորականի ձայնը ազգային զարթնումի հզօր ազդակներ էին։ Գ. Քաթիպայի „Ազատ երգերը“ թունդ էին հանում զգայուն հոգիները, Արծրունին իր „Մշակ“ով թիւրքահայ ազատագրութեան աննկուն զօրավիգն էր, Դերենցի պատմական վէպերը գերում էին երիտասարդ սերնդի երևակայութիւնը, Խրիմեան ու Վարժապետեան, որպէս ցեղի փրկութեան կենդանի խորհրդանշաններ, պաշտում էին հայութեան լայն խաւերում. և յետոյ ուրիշները, աւելի նեազ յայտնի. որոնցից իւրաքանչիւրը իր էութեան լաւագոյն մասն էր զոհաբերում Մեծ Գաղափարի իրագործման։ Սակայն, այս բոլորի մէջ Րաֆֆիի տեղն ուրոյն է և նրա կատարած դերը եզակի։

Րաֆֆին առաջինն եղաւ, որ այլաբանութիւններից, մութ ակնարկներից, զգուշաւոր, յաճախ երկչոտ քարոզներից անցաւ պարզ ու վճռական խօսքի, առաջին անգամ վէրքը ցոյց տալուց յետոյ՝ ցոյց տուեց նաև դարմանը... կուի ճամբան։

Եւ յետոյ՝ ոչ ոք նրա պէս կարողացաւ խտացնել, յստակօրէն ձևակերպել ու ցուցադրել հայութեան տարտղնած ու տարտամ տենչերը, նրա անորոշ ձգտումները, ինչպէս և զարթնող՝ բայց տակաւին յօրանջուն ազգային գիտակցութիւնը։ Մի ամբողջ սերունդ՝ 80-ական թուականների կուռ, իդէապաշտ և գերազանցօրէն հարազատ սերունդը հևիհև ապրեց Րաֆֆիի շնչով, ակնապիշ մնաց նրա շրթունքին իր ճամբան ընտրելու և իր կեանքի, պատգամները լսելու՝ որպէս մարգարէի, տեսողի շրթունքներից։

Եւ պատգամը, որ հնչում էր ուժգնօրէն, անվերապահ ու վճռական նրա բոլոր երկերում, նրա բոլոր հերոսների խօսք ու զրոյցի մէջ՝ մի հատիկ էր — ապրելու համար պէ՛տք է նաև գիտենալ մեռնել։ Նրա բոլոր գլուխ գործոցները, պատմական վէպ, թէ ժամանակակից յղացումներ, „Սամուէլ“ ու „Դաւիթ բէգ“, „Խամսայի Մէլիքութիւններ“ թէ „Կայծեր“ ու „Ջալալէդդին“, իրենց արտաքին պէսպէսութեան, բազմազանութեան տակից վեր էին հանում ազգային վերածնութեան, ազատ անկաշկանդ կեանքի բուռն տենչ և բոլորի մէջ հնչում էր մի հզօր կոչ, դէպի ազատութիւն միմիայն պայքարի միջոցով։ Առնական, կորովի, տղամարդութեան մի գրականութիւն էր այդ, որ խտտղում, շոյում էր արիութիւնը, բորբոքում երիտասարդ աւիւնը, գրգռում բարձր փառքի ծարաւը և մարտական առաքինութիւնը սրբագործում, բարձրացնում իշխող դարաւոր խեղճութեան, անփառունակ համակերպման, կղերամիտ ու կղերական նուաստացուցիչ հնազանդութեան բորբոսնած մթնոլորտից շա՜տ վեր։ Վարարած յորձանք էր նրա խօսքը, որ զարկւում էր հայութեան վրայ ծանրացող դարաւոր բռնութեան և գործի, պայքարի կոչում բոլոր արժանիքով լի, կամքով հարուստ և գիտակցութեամբ բարձր անհատականութիւնները։

Եւ այդ կրակ խօսքի համար ընտրած մոմենտը գերազանցապէս հրահանգիչ էր։ Արդէն Իսրայէլ Օրիի թողած և այնքան անգամ փորձուած դիւանագիտական աւանդութիւնը վերջնականապէս թաղուել էր Բերլինի կոնգրէսում հայկական դիւրահաւան յոյսերի հետ. 61-րդ տխուր յօդուածը աշխարհի հզօրների հեգնանքն էր շպրտուած մեր տառապանքին։ Եւ Խրիմեան յետ էր գալիս այդ կոնգրէսից դառնացած հոգով հայ աշխարհին ասելու համար, թէ „կեանքի հարիսայի մեծ կաթսային թղթէ դգալներով չի կարելի մօտենալ“։

Հարկաւոր էր փրկութեան նոր ճամբաներ, նոր հնարներ մտածել։ Այս մտահոգութիւնը ընդհանուր էր. հայկական շարժման բոլոր կորովի ռահվիրաները Խրիմեանի հետ ուժգին կսկծիքով զգացին դիւանագիտութեան պատճառած ծանր հիասթափութիւնը և իւրաքանչիւրի հոգում դա անդարձ յեղաշրջումն էր դէպի ըմբոստութիւն. ազգային հոգեբանութեան այս եզակի մոմենտն է, որ յաճախ կամաւոր կուրութեամբ կամ սնանկ մտածումով չեն նկատում հայկական շարժման ու նրա վարիչների անբարեխիղճ հակառակորդները։

Եւ ահա այդ ամեն կողմից հետաքրքիր, բնորոշ մոմենտին էր, որ Րաֆֆին հրապարակ եկաւ իր հայդուկային պայքարի, դաւադրական շարժման քարոզով։ Ցպաւորութիւնը ցնցող էր։ Դարերի մրափից, ստրկական անարգ համակերպումից յետոյ լսւում էր կանոնաւոր մարտի, ծրագրած ապստամբութեան առնական խօսքը, որ հալած երկաթի կաթիլներով ընկնում էր ու վառում զգայուն սրտերը։ Եւ այդ խօսքն ասւում էր ո՛չ հռետորական արուեստով, ո՛չ հրապարակախօսի կրքոտ թափով, այլ այն թափառական, երազուն, անհանգիստ երիտասարդների, կարօտների ու Ասլանների, Համբերի, Աւօների շրթունքներով, որոնք Րաֆֆիի բեղմնաւոր երևակայութեամբ լոյս աշխարհ եկած՝ մենաւոր խորհրդաւորութեամբ անցնում էին հայկական բարձունքներով, խուլ, անմատչելի ձորերով, հեռաւոր կորած գիւղերով, տեսնում էին ցեղի ցաւը իր բոլոր ուժգնութեամբ, շօշափում էին խորունկ վէրքը, և նոր կեանքի, վերածնութեան ուղին ցոյց տալիս։

Պայքարի, դիմադրութեան մարտահրաւէրը, ընդվզումի այդ համարձակ քարոզը սակայն՝ առանց բուռն պայքարի չէր, հայ աշխարհի վրայ ծանրացած բռնութիւնը չափազանց երկար, նրա ազդեցութիւնը չափա-

զանց ապականիչ էր եղել, որպէս զի անաղարտ մնար ցեղական արժանիքի գիտակցութիւնը, հինաւուրց ազատական ոգին։ Կղերա-պահպանողական տարրը, լքումի, համակերպութեան սողոսկող աւանդապահութիւնը հրապարակ եկաւ, առողջ, կենսալի հոսանքի դէմ, արդէն ծայր տուող ազգային շարժման հանդէպ պատուար բարձրացնելու բացարձակ դիտումով։ Աւանդապահութիւնն իր հետ ունէր բոլոր նրանց, որոնք ամենագաժան բռնութեան տակ իսկ իրենք իրենց զգում են ինչպէս ձուկը ջրում, բոլոր արտօնեալներին, բոլոր վայելողներին, բոլոր նրանց, որոնց գլուխների վրայից են անցնում միշտ ազգային մեծ տառապանքի դառնաղի յորձանքները։

Ի զուր... հնազանդութեան քարոզներն անկարող եղան անվստահելի, կորստաբեր հռչակել Բաֆֆիի գծած ուղին. նրա հերոսները վէպերից, երևակայականից իջան կեանքի մէջ, գրեթէ նոյն անուններով, նոյն խառնուածքով, նոյն ձգտումներով, որ մեծ վիպագիրն էր ուրուագծել, բայլելու համար նոյն ճանապարհով, որ նա էր ցոյց տուել։

Արդարև չափազանց յուզիչ ու բնորոշ է, որ հայ մարտիկների, հայ հայդուկների մէջ այնքան շատ են Բաֆֆիի հերոսների անունները կրողներ, - Կարօ, Ֆարհատ, Ասլան, Աւօ...

Եւ հայկական իրական շարժումը փուեց ու խորացաւ, անհատական մտածումից՝ դարձաւ հանրային, երիտասարդութիւնը խումբ խումբ նետուեց դէպի այդ իդէական շարժումը, մինչդեռ հայ պահպանողականութիւնը, հայ դրամատիրութիւնը կամ անասնական եսասիրութեամբ փակեց աչքերը ազգային մեծ առեղծուածի առաջ, անձնատուր լոկ իր սեփական որկորին ու վայելքին կամ եթէ շարժուեց, դա եղաւ՝ խափանելու, վարկաբեկելու, թուլացնելու համար մարտիկների անձնուրաց ճիգերը։

Պատմութիւնը կ'ասի մի օր, թէ ինչ բաժին ունի հայկական ազատամարտի ձախողանքի մէջ հայ ազատականութիւնը, հայ դրամատիրութիւնը, աշխարհի ամենէն գձուձ, ամենէն վատշէր, քաղաքացիական առաքինութիւններից հազուագէպ բացառութեամբ՝ խպառ զուրկ այդ պարարտ, անիդէալ դասակարգը, որ այսօր էլ ազգային տագնապի այս ծանր օրերում՝ անտարբեր հանդիսատես է իր գարշելի քսակը հոգիի վերածած։

***

Եւ ահա քսանուհինգ տարի անցաւ մեծ գրագէտի մահից։

Քիչ անգամ հայ ժողովուրդը իր պատմական ալէծուփ կեանքի ընթացքում ապրել է յոյսերով ու յուսախաբութիւններով այնպիսի մի հարուստ շրջան, որպէս այս քառորդ դարը։ Սրտապարար, ոգևորիչ սպասելիքների մեծութիւնից՝ տասնապատիկ աւելի մեծ եղաւ վրայ հասած արհաւիրքը, և մօտալուտ փրկութեան խանդավառութիւնը արիւնոտ եղեռնի մէջ խեղդուեց։

Անօգուտ է անդրադառնալ։ Հայ պատմութեան այդ մռայլ էջը մեր աչքերի առաջ գրուեց. ազգային մեծ վէրքը դեռ մխում է, հայ ճակատագրի ծանր առեղծուածը դեռ լուծուած չէ, արիւնի մղձաւանջը դեռ խեղդում է մեզ։

Մեծ հիասթափութեան ծանր, աղէտալի շրջանում Բաֆֆիի, ինչպէս հայկական շարժման բոլոր ռահվիրաների, անգամ հայկական բարձունքների վրայ զէնքը ձեռքին ընկած մարտիկների անունները թեթևօրէն պատասխանատուութիւն սահմանող շրթունքներով յաճախակի կապուեցին սև վերյուշերի հետ։ Փութկոտ, անքննադատ պարզամտութիւնը անձնատուր եղաւ ռամիկ ու յախուռն բարբաջանքներին, և քինախնդիր ու շահագրգռուած փարիսեցիութիւնը չկամեցաւ վեր բարձրանալ խստաւոր, թունոտ յարձակումներից, անհիմն մեղադրանքներից։ Իմաստակութիւնը վրան առաւ յետին թուով ազան իմաստութեան ծիրանին։ Համատարած լքումը պարարտ հող էր և դատապարտութիւնը՝ հեշտ, դատավճիռը՝ պատրաստ։

Խօսքն ամբոխին էր.

Եւ ամբոխը խօսեց...

Ապա Կարօներն ու Ասլաննե՞ը, Խենդերն ու Աւօնե՞ը... Ի՞նչ եղան Վարպետի այս անձնուրաց, այս յամառ աշակերտները։ Ցուսախաբութեան փոթորիկը, համազգային անասելի աղէտը նրանց էլ թիկունքը դատարկեց, նրանց էլ շարքերը դողաց, բայց դա միայն մի վայրկեան, անընկճելի մարտիկները վերջի վերջոյ մնացին անսասան, պայքարի ճամբին, իրենց դիրքերում, մահուան ճակատին, անյողդողդ ու հպարտ։

Եւ եթէ հայկական շարժումը—ինչո՞ւ չ'ասեմ հայկական հարցը—մնաց կենդանի, որպէս մշտական սպառնալիք թիւրքական բռնապետութեան, եթէ հայ ժողովուրդը իր վիթխարի հիասթափութիւնից յետոյ՝ ուշակորոյս հօտի պէս վերջնականապէս չնետուեց ստրկական համակերպութեան տխուր ասպետների գիրկը. և վերջապէս եթէ այսօր՝ աւելի քան երբէք, նա՝ այդ մարտիրոսած ազգը, աշխարհի առաջ բարձրագլուխ իր իրաւունքն է պահանջում, այդ բոլորի համար խոշոր չափով մենք պարտական ենք Բաֆֆիի անձնուրաց աշակերտների գրեթէ անհատական ճիգերին։ Իզուր չէր, որ Քրիստափորները տասնեակ տարիներ շարունակ հրահրեցին մարտական բոցը և թոյլ չտուին, որ յուսահատութեան հովը ազգի արիութիւնը մարի։ Իզուր չէր, որ հակառակ աւանդապահութեան ամօթալի կլանչոցներին, Սերոբ ու Գէորգ Զաւուշ, Նիկոլ ու Վարդան, Անդրանիկ ու իր ընտիրների ջոկատը, և քանի ուրիշները, այնքան տարիներ սքանչելի յամառութեամբ արծիւների պէս թառած մնացին հայկական անհիրընկալ, դաժան բարձունքների վրայ, որպէս հայ ժողո-

վերդի կենդանի ու վրէժխնդիր խիղճը, նրա աննկուն, երկաթէ ոգին, որ չպիտի հանգչի, մինչև արդարութեան ու ազատութեան կատարեալ յաղթանակը։ Ահա Ասլաններն ու Կարօները, ահա Աւօներն ու Խենթերը, Մեծ Վարպետի մեծ աշակերտները։

ՏԱՐԱԳԻՐ

ՐԱՖՖԻ

(ՄԱՀԻԱՆ 25-ԱՄԵԱԿԻ ԱՌԻԹՈՎ)

Համազգային վշտի օր էր ապրիլեան այն տխուր, ամպամած օրը, երբ — քառորդ դար սրանից առաջ — ռուսահայ մտաւորականութիւնը հողին էր յանձնում իր մեծ վիպասանին։

Մահուան բօթը — այնքան անակնկալ ուրքան և կսկծալի — գնում էր գաւառի ամենայետին խորշերը, մտնում էր ժողովրդական ամենահամեստ կացարանները, գնում էր ամենուրեք գուժելու, որ մեռել է հայկական ազատութեան երգիչը, հայոց պատմութեան փոթորկաձայն մարգարէն, հայ լեռների ու ձորերի, հայ դարդերի և յոյսերի աննման սրնգահարը։

Ընկճեց մի վայրկեան գաղափարական երիտասարդութիւնը, համակուած ծանր, անդարմանելի սգով։ Հարուածը չափազանց անողոք էր, կորստի գիտակցութիւնը չափազանց խոր ու ահաբեկող։ Ռաֆֆիները յաճախ չեն ծնուում...

Սակայն, ազգային կեանքի անիւը հասել էր արդէն իր որոշեալ հանգրուանին, զարկը տուել էր արդէն ազատագրական մեծ քարոզին ու հոսանքին, սերմը ձգուել էր մեծատաղանդ վարպետի ձեռքով — նպաստաւոր հողի վրայ և շուտով պիտի բողբոջէր ու բարգաւաճէր...

Ռաֆֆին մեռա՞ւ — կեցցէ՞ Ռաֆֆին... կարող էր գոչել հայ նորածիլ, ազատատենչ սերունդը։ Գաղափարը՝ վիպասանին սնուցող ու շնչաւորող գաղափարը՝ արդէն իսկ մարմնանում էր կեանքի մէջ։ Հայոց տխուր հորիզոնը շառագունում էր կամաց-կամաց և հայկական ազատամարտի առաջին ծիծեռնակները — հատիկ-հատիկ Ասլաններ ու Կարօներ — թափօրում էին Մասիսի շուրջը։

Շուտով նրանց — Զէքիներին ու Ցունօներին — պիտի հետևէր ռազմիկների լեգէօնը և կեանքը պիտի ալէկոծուէր, անկման ու ապականութեան ճահիճը պիտի փոթորկուէր ծայրէ ծայր, ստրկութեան դարաւոր ու մնջոտն հառաչանքը պիտի խլուէր, վերջապէս, բողոքի ու ընդվզումի առնական ճիգերով։

Ի՞նչ փոյթ, թէ այդ հերոսական ճիգերը մերթ ընդմերթ խլացան ու մարեցին արիւնագոյն հրդեհի մէջ... Համաշխարհային պատմութեան բեմի վրայ ո՞ր ազգն է, որ երբևէ չի ճաշակել վիթխարի աղէտների մղձաւանջը... Մերը ամենից մեծն եղաւ և ամենից ահարկուն — բայց մեր ազգային արատների լեռն ևս գուցէ ամենէն բարձրն էր... Մենք չունեցանք ազգովին ճիգ, ներդաշնակ ու միաբան ճիգ հանդէպ հսկայ խոչընդոտների. մենք ունեցանք անձնուրացների մի չնչին փոքրամասնութիւն, որ գաղափարով վառուած, նետուում էր բոցերի մէջ և դրա հանդէպ՝ մի ահագին խստաճարակ մեծամասնութիւն, որին երբէք չյուզեց այդ գաղափարի այժմէութիւնն ու վսեմութիւնը։

Ա՜հ, Ռաֆֆին նախատեսել էր այդ չարաշուք պատուհասը։ Նա գիտէր — դեռ իր առաջին քայլերի մէջ — թէ ինչ ահարկու խոչ ու անդունդների պիտի զարնուէր հայկական ըմբոստացման գաղափարը իր իրականացման ճամբու վրայ...

Այո՜ — գրում էր Մէլիքզադէն 1878-ի յուզումնալի օրերում — այս, 850 տարի է, որ հայոց ազգը մօնգոլական կրակի մէջ այրվում է և մի ձայն, մի բողոք չի բարձրացնում։ Դա հայի մեռելութեան նշանն է... Ազատութիւնը տրվում է այն ազգերին, որոնք իրենց ազատութիւնը արով գիտեն պաշտպանել, առանց արիւնի՝ չկայ ազատութիւն *)...

Իսկ դրանից վեց տարի առաջ, 1872-ին, նոյն Ռաֆֆի-Մէլիքզադէն, կատարելով իր պատյտը Ջուլամերկում և այցելելով Մար-Շիմօնին ցաւով ու դառնութեամբ է լսում վերջինի կծու դիտողութիւնները հայի սարկամիա բնազդների մասին և պատասխանում է նեստորական պատրիարքին.

Բարբարոս ազգերի դարաւոր բռնութեան ներքոյ հայերը ճնշելով, մաշելով, կորցրին իրենց քաջութիւնը...

Մար-Շիմօնը սակայն առարկում է.

Ընդհակառակը, հէնց բռնութիւնները միշտ ստիպում են վառ պահել քաջասրտական ոգին... Հայերը կորցրել են քաջութիւնը՝ իրենց հոգևորականների շնորհիւ. նոքա մեռցրին իրենց ժողովուրդը միշտ քարոզելով նրան՝ խոնարհութիւն, համբերութիւն, ճգնութիւն...

„Ես ոչինչ այլ ևս չպատասխանեցի — ասում է Ռաֆֆին — Մար-Շիմօնի խօսքերի մէջ երևում էր խորին ճշմարտութիւն “ **)..

Կղերը, հայկական առանձնատիպ կղերը, մի կատարեալ չարիք էր „Կայծեր“ի հեղինակի աչքում, մի չարիք, որ դարերի ընթացքում հարուածել, անդամալուծել է ազգի մարտական, դիմադրական կորովը։

Ահա թէ ինչ էր գրում նոյն Ռաֆֆին „Արծուի Վասպուրականի“ի մէջ, 1858 թուին, երբ տակաւին անծանօթ Յակոբ Մէլիք Յակոբեան էր, խակ, անվարժ, թոթովուն մի գրիչ... Եւ առաջին թոթովանքն արդէն հակակղերական ուժեղ շեշտ ունէր. գրում է Յակոբ Մէլիք Յակոբեանը Խրիմեան Հայրիկին և հարց է տալիս.

Ինչո՞ւ արդեօք եւրոպացի ազգերը իրենց երբեմնի բարբարոսական վիճակից բարձրացան մինչև այժմեան քաղաքակրթութիւնը, այն ինչ Հայաստանը, որի զաւակները դեռ ամենահին ժամանակներում Աթէնքի մէջ էին ուսում առնում, — օրըստօրէ նուազեց, կորցնելով ըստ մեծի մասին Ազգութիւն և Հայրենիք...

---

*) „Մշակ“, 1878 թ. № 22։

**) „Մշակ“, 1872 թ. № 33։

Հարցին ինքն էլ պատասխանում է.

Այդ մասին թէև բազումք այլ և այլ պատճառներ յառաջ բերում են, իսկ նուաստս տկար կարծեցայս չափ, Հայաստանի հոգևորականաց անհոգութիւնը համարում եմ սորա միմիայն էական պատճառը...

Եւ ներողութիւն է խնդրում Հայրիկից, մի գուցէ նրա սրտին դիպի..

Անհատական բացառութիւնների մասին չէ, հարկաւ Բաֆֆիի խօսքը. Ներսէսների ու Խրիմեանների մասին նա ինքն ունի խանդավառ ջատագովականներ.: Քննադատութեան նշաքն ուղղած է դասակարգին։

Յետագայում, երբ վիպասանի միտքն աւելի հասունացաւ, նա այլ պատճառներ ևս տեսաւ մեր ներքին անկարողութեան։ Աղօթողների դասակարգից՝ նրա խարանող մտրակն անցաւ... նաև դրամի դասակարգին։ Այդտեղ ևս անողոք է հայ դեմոկրատ վիպասանը։ Իր անվրէպ բնազդով հասկացել էր նա, որ ստրկութեան ամենավատթար արատներով ծանրաբեռնուած այդ դասակարգը—հայ վաճառականութիւնը, բուրժուազիան—խոչընդոտ պիտի կանգնէր ազատութեան ճանապարհի վրայ, ի տեղի նպաստաւորելու այն՝ ինչպէս եղել է ուրիշ ազգերի մօտ։

Այդ դասակարգի տիպիկ նմուշների հանդէպ էր, որ „Կայծեր"ի Ասլանը, Վանի իր արկածների միջոցին, բացականչում էր խորին զայրոյթով և յուսահատութեան դառն շեշտով.

Որքա՜ն ցածութիւն.. Եւ այդ մարդիկ Վանի ամենահարուստ վաճառականներից են... Խոզն այնքան ճարպ չունի, որքան նրանք ոսկիներ ունին... Ի՞նչ գաղափար կը կազմէի ես հայերի մասին, եթէ իսկապէս եւրոպացի լինէի։ Ահա այդ գարշելի արարածներն են, որ խայտառակում են ամբողջ ազգը *)...

Նման անթիւ հատուածներ դուք կը կարդաք վիպասանի միւս գործերում։

Զարիք—հայ ապիկար ու ստրկամիտ կղերը, Էարիք—հայ գծուծ, մսմնապաշտ բուրժուազիան... Բաֆֆիի յոյսը բուն ժողովուրդն էր, բուն աշխատաւոր և տառապող գիւղացիութիւնը, արհեստաւորութիւնը։ Նոյն „Կայծեր"ի մէջ դուք կը գտնէք հրահանգիչ վկայութիւններ..

Այդ տարրերի շունչով էր ապրում ժողովրդածին և ժողովրդասէր վիպասանը, այդ տարրերի վրայ էր նա կառուցել ազատագրական իր հոյակապ ծրագիրը...

Եւ բնազդը այդտեղ ևս չխաբեց նրան։ Այդ դասակարգերն էին, որ տարին իրենց վտիտ ուսերի վրայ հայ ազատագրութեան շարժումը, որ արտադրեցին իրենց ծոցից գաղափարի քարոզիչներ ու զինուորներ, տեսաբան-առաջնորդներ և կարիճ-հրամանատարներ։

***

Քառորդ դար է անցել Բաֆֆիի մահուան օրից, բայց Բաֆֆին դեռ չի մեռած՝ ոչ միայն մեր յիշողութեան ու գիտակցութեան խորքերում, ուր նա կ'ապրի յաւերժօրէն, այլ չի մեռած, տարաբախտաբար, և մեր ազգային գոյութեան ամենօրեայ հոգսերի ու ճիգերի մէջ...

Կը մեռնի նա այն ժամանակ, երբ հայկական իրականութիւնից կը չքանայ միանգամ ընդմիշտ գոյութեան մենամարտի ահաւոր անհրաժեշտութիւնը, երբ ֆիզիկական գոյամարտը տեղի կը տայ խաղաղ կուլտուրական պայքարի, երբ հայ կեանքն այլ ևս պէտք չի ունենայ Ասլանների ու Աւօների...

Իսկ քանի դեռ կայ այդ դաժան իրականութիւնը—հա՛յ երիտասարդ, հա՛յ պատանի, կարդա՛ Բաֆֆիին... Կարդա՛ և խո՛ր արձանագրիր գիտակցութեանդ մէջ այդ առնական պատգամները մեր սգատանջ վիպասանի, որոնցով նա ձգտում էր կեանքի կոչել ստրկութեան լեթարժիկ մրափի մէջ խորասուզուած համայնքը։

Թո՛ղ նորածիլ սերունդները չմեղկանան գրական ու փիլիսոփայական հրապուրիչ մարգանքներով, թո՛ղ նրանք էլ շարունակեն հների պէս տոգորուել բաֆֆիական շունչով ու գաղափարով. թող նրանք է՛լ անգիր անեն և ամեն օր առաւօտեան, աղօթքի պէս արտասանեն „Խենդ"ի ու „Կայծեր"ի ազատաշունչ էջերը... Ինչպէս որ մենք էինք անում սրանից—աւա՜ղ—20 տարի առաջ։

Որքան աւելի արագ երթայ մեր ազգային դաստիարակութիւնը այդ ուղղութեամբ, որքան աւելի լայն խաւերում արմատանայ ու տարածուի այդ ոգին, այնքան աւելի շուտ կը հասնի այն բաղձալի ժամանակը, երբ Բաֆֆի-քարոզիչը կը կորցնէ իր տխրագին այժմէութիւնը, երբ կուռ ու ապստամբութեան projeteur-ը կ'անցնի ազգային արշիվների մէջ, կերթայ հանգստանալու հայութեան պանթէօնում, և կը մնայ մեր մտաւոր հրապարակի վրայ սոսկ Բաֆֆի-գեղարուեստագէտը իր անջնջելի հմայքով ու յաւիտենական թարմութեամբ...

Մ. ՎԱՐԱՆԴԵԱՆ

ԲԱՖՖԻԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Exegi monumentum ære perennius.
Horatius

Ես կերտեցի յուշարձան մը աւելի տևական քան պղինձը։

Բաֆֆի՛, հա՛յր անփոխարինելի հայկական յամեցած Ընդվզումին, դու կերտեցիր յուշարձան մը աւելի տևական քան պղինձը և այդ քու գործն է։ Փա՜ռք քեզ։

Քսանևհինգ տարիներ յետոյ այն մռայլ օրէն, ուր քանի մը թրքահայ աշխատաւորներ՝ երախտագիտութեամբ ու կսկիծով դողդողուն իրենց բազուկներուն վրայ առին մարմինդ իբրև նշխար նուիրական, տե՛ս,

*) „Կայծեր", հատ. II։

քսանեւհինգ տարիներ յետոյ այդ օրէն, հիմա ամբողջ Թրքահայութիւնն է ուխտի կուգայ Ցիշատակիդ, կատարած Գործիդ։

Եւ դուն բարձրացո՛ւր հանճարեղ կամարը ճակատիդ և տե՛ս թէ ինչքա՞ն է փոխուեր այդ Թրքահայութիւնը հիմա. տե՛ս թէ ցանած սերմերդ նահատակներու արիւնով ոռոգուած ի՞նչ սրբազան ու բեղուն հունձք են արտադրեր, տե՛ս քու արձակած Կայծերդ ի՞նչ հրդեհներ են բռնկցուցեր և ինչքա՞ն, ինչքա՞ն բազմացեր են Խենթերը... ճի՛շտ է, Երազը կը շարունակէ մնալ Երազ դեռ ցայսօր... բայց անոնք՝ որ կը տեսնեն զայն՝ այդ Երազը՝ հիմա՝ ամե՛ն օր ամե՛ն ժամ լեգէո՛ն են...

Բարձրացո՛ւր, բարձրացուր Թանկագին գլուխդ, Բաֆֆի՛, և տես Թողուցած հետքիդ ծաւալը, բացած ակօսիդ խորութիւնը, ստեղծած դիւցազուններուդ անվեհերութիւնը և Թող հոգիդ խայտայ։

Սերունդները կը յաջորդեն սերունդներուն Հայութեան ծոցին մէջ, առանց դադարի, ինչպէս առաւօտները երեկոներուն, և քու սերդ, Բաֆֆի, ու ներարկած ըմբոստութեան պատուաստդ արիւնէ արիւն կը մշտնջենաւորուին միշտ աւելի զօրեղ, միշտ աւելի զարհուրելի, ճիշտ մեր ցաւերուն, մեր յուսախաբութիւններուն պէս։

Տե՛ս հիմա մենք այլևս չենք լար. դու ըսիր որ լացը օգուտ չունի. բռնաւորութիւններու գեհենը,—ըսիր դու մեզի,—չի հանգիր տանջանաւորին արտասուքովը և մենք լսեցինք քեզի և մենք սովրեցանք բ ո ղ ո ք ե լ գ ո ռ ա լ, հ ա ր ւ ա ծ ե լ...

Հայաստանը զոր սիրեցիր և որուն գեղեցկութիւնները քեզ Թովեցին ու սարկութիւնը գրգռեց քեզ, գիտէ հիմա որ Իրաւունքները բռնի կըստացուին մեր հորիզոններուն վրայ ու բռնի կը պահուին, մինչև անգամ կեանքի բնական իրաւունքը։

Բռնաւորին բոլոր սարսափները խեղդելու համար այնտեղ ձայնդ մնացին անզօր. հմայքդ ելեքտրացուց Թրքահայ աղջիկն ու պատանին և անոնք՝ առաջնորդուած՝ բանտի ու աքսորի նկատմամբ այն ահաւոր արհամարհանքէն, զոր ներշնչեցիր իրենց, կուրծքերնուն վրայ, բազուկներուն տակ սեղմած, գաղտնի, գիշերուան խաւարին հաւատարիմ մեղսակցութեամբը, խրճիթէ խրճիթ, գիւղէ գիւղ, քաղաքէ քաղաք փոխադրեցին հրաշունչ հատորներդ։ Եւ կարդացին կարդացին, պառաւները, ծերերը, տղաքը, երիտասարդները, կիներն ու այրերը կարդացին ամենքը քեզ, ծծեցին հոգիդ անով ներշնչելու համար, գոց ըրին խօսքերդ իրարու կըրկնելու համար և նոյնացան տիպերուդ անոնց պէս ըլլալու համար...

Եւ հարկաւ այդ ա՛յդպէս պիտի շարունակուի ինչքան ապրի Հայը. մենք սերունդէ սերունդ քու շունչովդ պիտի ներշնչուինք Բաֆֆի՛ և պիտի ըլլանք ճիշտ քու ուզածիդ պէս, միշտ, սերունդէ սերունդ, բոլո՛ր Հայերս, պաշտո՛ղ ազատութեան՝ իր բոլոր ձևերուն մէջ՝ հարուածող բռնութեան՝ իր բոլոր գոյներուն տակ..

Ո՛վ հայր հայկական ուշացած Ընդվզումին, դու կերտեցիր յուշարձան մը որ արդարև աւելի տևական է քան բոլոր պղինձները այս աշխարհին։

Բ. ՇԱՀԳԱԶ

„ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ" ՆԱՀԱՏԱԿՆԵՐԸ

ԳԱՐԵԳԻՆ ԽՆԿՈՅԵԱՆ ԱՍԼԱՆԵԱՆՑ

1876—1906

Ծնեալ է Կարինում. իր կրթութիւնը ստացել է տեղւոյն Ազգ. Արծնեան դպրոցում։ Համեստ և ըմբոստ ընտանիքի մը զաւակ։ Հայ կարնոյ մէջ գործիչ ընկեր մը, որ չճանչնայ էթտէր Խնկոյենց տուն։ Մեծ-



Գ ա ր ե գ ի ն Խ ն կ ո յ ե ա ն

նալով այդ ընտանիքի մէջ, նա արդէն ծանօթ էր այն թեականներում գործող և աչքի ընկնող բոլոր ընկերներին։ Յեղափոխականի առաջին պայման — գ ա ղ ա ն ա պ ա հ ո ւ թ ի ւ ն ը արդէն նա ունէր և իր կատարած փոքրիկ, բայց անհրաժեշտ գործերը արդէն իսկ ցոյց կըտային ապագայի աւելի հմուտ ու եռանդուն յեղափոխականը։

Անցնում են տարիներ և Գարեգինը իր ծնողներու առաջարկութեամբ մտնում է դերձակի մը մօտ աշկերտութեան։ Քիչ ժամանակից՝ ստանում է խալֆայի տիտղոսը և բաւական ուռճիկ։ Գարեգինը այժմ մտածում է իր ստացած զուրուշները զէնքի տալ և համոզում է իր ընկերներին նոյնպէս զէնք ունենալ։

Հասնում են Համիդեան ռէժիմի սև օրերը, երբ ամեն մի կասկածելի հայ քշւում էր բանտ առանց ոևէ օրի-

նական պատճառի։ Ձերբակալում են նաև հանգուցեալի մեծ եղբօրը, Գ.ևորգին, որից յետոյ նա աւելի է տաքանում իր սիրած գործին մէջ։ Մեծ խորհրդատուն, Թաթուլը միշտ քաջալերելով երիտասարդը, մղում է նրան դէպի զանազան գործեր, տալիս է նրան ի միջի այլոց սուրհանդակի պաշտօն։ Եւ սուրհանդակը կատարում է իր դերը ամենայն լրջութեամբ, առանց ոեւէ կասկածի տեղիք տալու, մինչև Թաթուլի, Արամեանի կախուիլը։ Գարեգինը, տեսնելով իր սիրած քարոզչին կախաղանի վրայ, համակւում է բուռն զայրոյթով, բայց և յեղափոխականին վայել արիութեամբ շարունակում է իր գործը մինչև 1900 թուականը։

Ընորհիւ իր գաղտնապահութեան, նա մինչև այդ թուականը դեռ յայտնուած չէր բայց սիալ չէր և այն կարծիքը, որ իր տաք բնաւորութեամբ օր մը նա վտանգի մէջ պիտի ընկնէր։

Հասաւ այդ վտանգը։ Ինչ որ կասկածելի իր՝ բանտ առնելով, նա ձերբակալւում է, բայց կաշառքով ազատւում։ Այս անգամ որոշում է փախչել Կովկաս։

Մի օր Գարեգինը ծպտեալ հեռանում է քաղաքից, առանց ծնողներուն իմացնելու, և շատ դժուարութիւններից անցնելով, գալիս է Ղարս։ 6—7 ամիս այդտեղ մնալուց յետոյ, փոխադրւում ու հաստատւում է Թիֆլիս։ Նիւթական կարօտութեան պատճառով՝ սկսում է իր արհեստով պարապել, միևնոյն ատեն հետևելով իր գաղափարական գործին. քիչ ժամանակւայ մէջ նա ծանօթ էր արդէն Թիֆլիսի ամէն մի անկիւնին. ընկերները սիրում էին նրան՝ իր աշխոյժ բնաւորութեան համար։

Հասնում են 1905—06 թուականները. սկսւում է Թաթարական «պոգրոմը»։ Գարեգինը նեռւում է ասպարէզ, ստանձնում է զէնքի փոխադրութեան պատասխանատու գործը. և մինչև իր նահատակութեան օրը, տանում է այդ գործը առանց փոքրիկ մի վնասի։

Նախիջևանի կռիւները արդէն սկսած էին. Գարեգինը Թիֆլիսի նաֆթալուղ կայարանում իր պաշտօնի գլուխ անցած՝ եռանդով կատարում էր իր պարտքը։ Նրա շարունակ կայարան այցելելը ժանդարմների մէջ կասկած յարուցանելով՝ հետապնդում են, որ ձերբակալեն. բայց չի աղողուում։ Սակայն, մի անգամ, վերջապէս, փախչելու ժամանակ, մեր խեղճ ընկերը ընկնում է Բագուից եկող մարդատար գնացքի անիւների տակ, աջ ոտից երկու մահացու ջարդուածք է ստանում։ Հասնում են ժանդարմները, փոխադրում վիրաւորին երկաթուղային հիւանդանոց, ուր նա իր կարևոր թղթերը յանձնելով քահանային, մեռնում է։

Թիֆլիսի մարմնի կողմից՝ գնում են մի ծաղկեայ պսակ, իբր յարգանք նահատակ ընկերոջ յիշատակին։ Թաղումը կատարուեց Խօջիվանքի գերեզմանատան մօտ, 5—6000 երկսեռ բազմութեան ներկայութեամբ։

Գերունի հայրը մինչև օրս էլ կ'ոգևորւի ամէն անգամ՝ երբ կը լսէ վկայութիւններ իր որդու այդքան կարճ, բայց մաքուր գործունէութեան մասին և իբրև օրինակ, նա իր միւս որդկերանց ցոյց կը տայ միշտ Գարեգինին։

ՄԱՐՏԻՐՈՍ ՑԷՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

(1849—1905)

Մ. Տ. Ց — Քեմախու Բագառիճ գիւղի Ս. Նշանայ վանքէն, 12 տարի շարունակ գործունեայ անդամ Հ. Յ. Դաշնակցութեան, 1902 յունիս ամսոյն Պուլկարիայէն հայրենիք կը մեկնի, բայց մատնելով Պուրկազի ազգայիներէն՝ Մկրտիչ Քէմիքճեանէն, տեղւոյն թիւրք հիւպատոսի մի հեռագրով կը դատապարտուի 5 տարուան



Մարտիրոս Ցէր Յովհաննիսեան

թիապարտութեան։ Դահիճները կ'ենթարկեն զինքը անլուր խոշտանգումներու, և վերջապէս, քանի մը տարի բանտը պահելէն ետքը՝ կը թունաւորեն իր երկու ընկերներու հետ միասին—Հաճի Գալուստ Արխանեանի և Ոսկեան Թորոսեանի։ Քովերնին գտնուած են կարգ մը յեղափոխական թղթեր։ Երեք նահատակները կը թաղուին միասին Քեմախի հայոց գերեզմանատան։

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԱՑՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՄԵՆՔ

Մօտ է խաղաղութիւնը, դիպլոմատներն արդէն հրճուանքով շփում են իրենց ձեռքերը, բայց արևելեան կնճիռը հարթուած է արդեօք... Ոչ ոք չի հաւատում։ Սիւրիան անհանգիստ է, Արաբիան ըմբոստ՝ ինչպէս միշտ՝ մշակուած անջատական ձգտումներով, իսկ Հայաստ-

տանը շարունակում է լինել թատերաբեմ արիւնոտ անցքերի, որոնք կարող են յանգել մի նոր կատաստրոֆի։

Ոչ ոք չի հաւատում տեսական խաղաղութեան. չեն հաւատում ամենից առաջ իրենք դիպլոմատները։ Ամեն օր մի նոր պատահար-անակնկալ է հրապարակ գալիս, որ փոթորկում է հորիզոնը և սպառնում բռնկեցնել համաեւրոպական մեծ հրդեհը։

Եւրոպական Թիւրքիան խլեց իր դարաւոր տիրոջից բայց աւարի բաժանման խնդիրը կայ բալկանեան դաշնակիցների միջև, որ այժմից իսկ վտանգաւոր բնոյթ է առնում։ Կայ ալբանական խնդիրն ևս, որ տակաւին վէճի առարկայ է, շնորհիւ մի կողմից աւստրօ-իտալական բորբոքած ախորժակների, միւս կողմից եւրոպական այլ պետութիւնների, մասնաւորապէս Ռուսաստանի, ընդդիմութեան։ Կայ յունական կղզիների և Եգիպտոսի խնդիրը, որի առթիւ քաղաքակիրթ մարդկութիւնը զզւանքով ականատես է լինում մի անլուր, վանդալական բռնութեան... Վանդալը „դեմոկրատիկ“ Իտալիան է, Գարիբալդեան Իտալիան, որ ցինիզմով դրժում է իր լաւագոյն աւանդութիւնները, ոտնահարում ազգայնական սկզբունքը և չի ուզում միացնել տալ Ցունաստանին այն մի քանի յունաբնակ վայրերը, որոնք ազատուելով օսմանեան լծից, այնքան կարօտով ու խանդավառութեամբ ձգտում են դէպի մայր-հայրենիքը... Ահա թէ ինչ հրեշաւոր երևոյթներ, ինչ այլանդակ մետաֆորմօզներ է ծնում ժամանակակից կապիտալիզմը, բուրժուազական ընչաքաղց և գիշատիչ աւետարանը...

Կայ, վերջապէս, ամենաահաւոր վտանգը—Ասիական Թիւրքիան... Նրա կազմակերպման նոր ձևերը, նրա „պայթումի“ և բաժանումի հեռապատկերը։

Անբուժելի „Հիւանդը“ պիտի կարողանա՞ կառավարել իր ասիական լայնածաւալ հողերը... Դրան ևս ոչ ոք չի հաւատում։ Եւ... արդէն իսկ Ասիական Թիւրքիան բաժանուած է „ազդեցութեան շրջանների“։ Ահա տենդային բանակցութիւններ՝ Անգլիոյ և Թիւրքիոյ, Գերմանիոյ և Թիւրքիոյ, Անգլիոյ և Գերմանիոյ միջև, որոնք յանգելու են որոշ, կոնկրետ, „բաժանական“ դաշինքների։ Անգլիան ձգտում է գերման-բաղդատեան գծի ծայրին և Պարսից ծոցի մօտ ամուր պատնէշներ կառուցանել գերմանական սպառնալից Drang-ի դէմ... Կը դիմանա՞ն այդ փոքրաթիւ պատնէշները, երբ տևտոնեան յորձանքը հեղեղելով Փոքր-Ասիան, Միջագետքը, նետելով ամենուրեք երկաթուղային ցանցերը, հաստատելով ամենուրեք արդիւնաբերական ձեռնարկներ ու ապրանքային մթերանոցներ, պիտի դառնայ իրօք միահեծան տէր այդ ահագին տարածութիւնների... Ամենից ուշ հասաւ Բիսմարկի հայրենիքը արևելեան մրցութեան թատերաբեմ, բայց և ամենից չաղ կորը վաստակեց նա „Հիւանդ Մարդու“ ժառանգներից. Բաղդատի գիծը ողնայարն է մի հսկայ օրգանիզմի, որի բախտը կարելի է ասել այժմից իսկ գտնւում է գերմանական ձեռքերում... Ցնտեսական հեգեմոնիային վազ թէ ուշ կը հետևէ քաղաքական հեգեմոնիան։ Արդէն իսկ Բերլինը ցուցարար ձևերով շեշտում է իր յաւակնութիւնները Կիլիկիոյ վերաբերմամբ, գերմանական նաւերը թափօր են անում Միջերկրականի վրայ։ Բէյրութից-Մերսինա, սպառնում են մինչև իսկ միջամտել եթէ պայթին Ադանայի վիլայէթում նոր հայկական կոտորածներ, և—այս է ամենաարտառոց անակնկալը—նաւատորմի հրամանատար Տրիւմմէլ, իր կառավարութեան թելադրութեամբ անտարակոյս, ճաշի է հրաւիրում թիւրք իշխանաւորներից յետոյ՝ հայ կաթոլիկ հանայնքի ներկայացուցիչներին... կամենալով թերևս ցոյց տալ այդ կոնկրետ քայլով, որ Գերմանիան փոխել է իր քաղաքականութիւնը հայերի վերաբերմամբ, որ հայ տարրի աջակցութիւնը պէտք է իրեն՝ Փոքր Ասիոյ իր այլազան ձեռնարկները աջողեցնելու համար, որ վայրենութեան ու բարբարոսութեան անապատի մէջ այդ տարրը միակ ճշմարիտ Kulturträger-ն է, որին պէտք է խնամել ու սիրաշահել գերմանական շահերի համար։

Այդ ենթադրութիւնը աւելի քան հաւանական է, երբ մտաբերում ենք գերման խոշոր մամուլի մի քանի յօդուածները հայկական խնդրի մասին, հրատարակուած վերջին ամիսներում, երբ յիշում ենք մասնաւորապէս Լէպցիուսի և իր բարեկամների որոշ յայտարարութիւնները... Անցաւ այն ժամանակը, երբ Բիսմարկ կարող էր ասել թէ հարիւր հազար կոտորուած հայերը և ամբողջ արևելեան խնդիրը չունին պօմերանեան մի զինուորի ոսկորների արժէքը։ Այն ժամանակ Գերմանիան չունէր տակաւին գաղութային քաղաքականութիւն, իսկ այսօր նա պատրաստւում է իր ձեռքը ձգել երկրագնդի լայնարձակ ու արգաւանդ հողերից մինը, որի մի մասը կազմում է հայի հայրենիքը և որի ամբողջ տարածութեան վրայ—Հալէպից մինչև Բաղդատ—ցիր ու ցան սփռուած են հայ աշխատաւոր բազուկները, մշակ, երկրագործ ու արհեստաւոր, առևտրական ու կարաւանատար և այլն։

Պէտք է սիրաշահել հայ տարրը — և այն՝ երկու նպատակով, նախ ուղղակի իբրև գործիք ծառայեցնելու այդ տարրը գերմանական քաղաքականութեան և երկրորդ՝ թոյլ չտալու, որ նա, լքուած, յուսահատ, նեռաի հզօր մրցակցի, Ռուսաստանի գիրկը։ Թոյլ չտալու, որ հայկական տառապանքը իբրև պատրուակ առնելով, Պետերբուրգի կառավարութիւնը որոշէ ընդլայնել իր կովկասեան սահմանները, երթայ գրաւելու Թիւրքահայաստանը և այդպիսով բաց անէ Ասիական Թիւրքիոյ բաժանութեան խնդիրը, որից առ այժմ, ըստ երևոյթին, խոյս է տալիս Բերլինը, գտնելով թերևս, որ իրեն հասնելիք պտուղը բաւականաչափ չի հասունացած...

***

Անգլո-Թիւրք, անգլո-գերման և թիւրքո-գերման բանակցութիւնները բորբոքում են և Ֆրանսիայի ախորժակը, և ահա նա ևս ձևակերպում է մի խոշոր պահանջագիր ու հրամեցնում Բ. Դրան։ Նացիոնալիստական մեծ մամուլը, իրեն գլուխ ունենալով Temps-ը, մղում է շարունակ կառավարութիւնը դէպի լայն ձեռնարկներ ու նուաճումներ. այդ մամուլը բերան-օրգանն է մի հզօր կուսակցութեան, որ կոչւում է „գաղութային կուսակցութիւն“ (parti colonial), որ գուցէ ամենամեծ և ամենալաւ կազմակերպւած ուժն է կապիտալիստական Ֆրանսիայի մէջ և որը աֆրիկեան Մարոկկոն նուաճելուց յետոյ, տակաւին չմարսած այդ ահագին երկրամասը, ձգտում է գրաւել այլ երկիրներ և ամենից առաջ Սիւրիան, ուր ֆրանսիական ազդեցութիւնը վաղուց ի վեր լայն արմատներ է ձգած իր դպրոցներով, երկաթուղիներով, բանկերով, հիւանդանոցներով, առևտրական և կրթական ամեն տեսակ հիմնարկութիւններով։ Սակայն այդտեղ ֆրանսիական ձգտումները կատաղօրէն բաղխւելու են գերմանական ձգտումների հետ...

***

ՀԱՑԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ.

Բաղխումները մեծ պետութիւնների միջև, Ասիական Թիւրքիոյ հողի վրայ աւելի ահաւոր կերպարանք կըստանան, քան Մարոկկոյում, Ալբանիայում կամ որևէ ուրիշ վայրում։ Այդ է պատճառը, որ գրեթէ բոլոր պետութիւնները սոսկումով են ընդնշմարում ընդհարման հեռապատկերը և աշխատում են ըստ կարելւոյն յետաձգել այն։ Բոլորն էլ եռանդով փաստաբանում են Թիւրքիոյ, նոր հաշմանդամ Թիւրքիոյ, „ամբողջութեան“ դատը (intégrité)։ Անգամ Ռուսաստանը չի ուզում անել դիւրին ոստիւնը դէպի Թիւրքաց Հայաստան և որոշած է ըստ երևոյթին սպասել աւելի աջող վայրկեաններին։

Եւ — որ ամենից մխիթարականն է, մասնաւորապէս հայերիս համար—բոլոր պետութիւնները պահանջում են Թիւրքիայից անմիջական և արմատական ռէֆորմներ։ Պարզ է բոլորի համար, որ ռէֆորմները միակ միջոցն է ապահովելու շատ թէ քիչ տևական միջազգային խաղաղութիւնը։ Ռէֆորմներ՝ Սիւրիայում, Հայաստանում, Արաբիայում և ամեն տեղ։

Աւելի ևս։ Դիւանագիտական աշխարհի շրջահայեաց մարդերը լաւ գիտնալով, որ Թիւրք կառավարութիւնն իր գլխու անկարող է ռէֆորմներն իրագործել, խօսում են արդէն Եւրոպայի ա ղ ա կ ց ո ւ թ ե ա ն, իսկ ոմանք նոյնիսկ կ օ ն տ ր օ լ ի, հսկողութեան մասին։

Լրագիրները հաղորդեցին, որ Անգլիան յատկապէս—իր նորագոյն բանակցութիւնների միջոցին—որոշած է դրամական փոխառութիւն անել Թիւրքիային (երկու միլիոն ոսկի) Հայաստանի մէջ բարենորոգումներ մըտցնելու համար։ Սա մի նոր „կիպրոսեան գաշնագրութիւն“ է, որ յուսով ենք չի ենթարկւի հնի տխուր ճակատագրին։ Անգլիան իր նոր բանակցութիւններով խոստանում է ապահովել Թիւրքիոյ ամբողջութիւնը և դրա փոխարէն իր թաթն է գնում բաղդատեան երկաթուղու վերջին ճիւղի վրայ (Բաղդատ-Բասրա-Կովէյթ), իր հովանաւորութեան տակ է առնում այն տեղերի շէյխերին և վերջապէս պահանջում է բարենորոգել Սիւրիան ու Հայաստանը, որի համար և ընձեռում է իր դրամական աջակցութիւնը։ Միաժամանակ Անգլիոյ քաղաքագէտները յայտարարում են, որ դրամից զատ՝ անհրաժեշտ է մատակարարել Թիւրքիային մ ա ր դ ի կ, պ ա շ տ օ ն ե ա ն ե ր, սպաներ՝ ամենից առաջ ոստիկանութիւնը, ժանդարմերիան վերակազմելու և ապահովութիւնը հաստատելու համար փոքր Ասիայում։ Նոյն կարծիքն է տիրում և միւս երկրներում։ Իսկ Times հրապարակ նետեց մի փորձւած արևելագէտի կոչ-յօդուածը, որով անյայտ հեղինակը նախազգուշացնում էր Եւրոպային, յայտարարում, որ առանց եւրոպական գործօն հսկողութեան, առանց իրական երաշխիքների՝ ռէֆորմների գործը պիտի վտանգւի...

Այսպէս թէ այնպէս, խնդիրը դրւած է հրապարակի վրայ, Ասիական Թիւրքիոյ, նրա հետ Հայաստանի վերակազմութեան հարցը դառնում է ամենակենսական և ամենահրատապ հարցերից մինը ժամանակակից դիւանագիտութեան համար։ Մամուլը լի է նրա առթիւ գրւած տեսութիւններով. և վաղը անհրաժեշտաբար նա կ՝արձանանայ Միջազգային Խորհրդաժողովի առջև։

Մ ե զ ևս պ ի տ ի լ ս ե ն—չեն կարող չլսել։

Մ. Վ.

„ԻՏՏԻՀԱԴԸ“ ՀԱՆՐԱՅԻՆ ԴԱՏԱՍՏԱՆԻ ԱՌՋԵՒ

Բալկանեան տենդը նւազում է և եւրոպական մամուլի ուշադրութեան առարկայ են դառնում Ասիական Թիւրքիոյ խնդիրները, Հայաստանի, Սիւրիայի ռէֆորմների խնդիրը։ Նրանով կըզբաղւի, անտարակոյս, հաշտութեան Խորհրդաժողովը, նրանով չի կարող չըբաղւել նոյնիսկ Պարիզում գումարւած ֆինանսական կոնֆերանսը, որ պիտի փնտրէ աղբիւրներ, պիտի աշխատէ հայթայթել նոր միջոցներ անդամահատւած Թիւրքիային՝ թէ իր պարտքերը հատուցանելու և թէ գոյութիւնը քարշ տալու համար։

Ռէֆորմների մասին յամառ կերպով խօսում է նոյնիսկ Թիւրք մամուլը, խօսում են և Թիւրք մինիստրները։ Խօսում է ինքը Շէվքէթ փաշան, ի պատասխան հայոց պատրիարքի յիշատակագրին։

Հետաքրքրական են Ջավիդ բէյի յայտարարութիւն-

ները, իր մի տեսակցութեան միջոցին, *Humanité*-ի աշխատակից, մեր բարեկամ Ժան Լոնգէի հետ.

„Հայերը վերին աստիճանի աշխատաւոր ժողովուրդ են... Հաւատարմութեամբ ծառայել են օսմանեան հայրենիքին... Մենք հաստատապէս որոշած ենք լուծել քրդերի ու հայերի միջև եղած վէճերը, արդարութեամբ լուծել հողային խնդիրը... վնասագրել (*indemniser*) քիւրդերին... Մենք որոշած ենք ամեն զոհաբերութիւն անել՝ խաղաղութիւնը տիրեցնելու համար այդ երկրում... Յանձնաժողովը ճամբուել է արդէն... Ամբողջ երկիրը պիտի բաժանուի շուտով խոշոր շրջանների. Սիւրիա, Միջագետք, Արևմտեան և Արևելեան Անատոլիա, Արաբիա։ Իւրաքանչիւրը կունենայ իր կառավարիչները և տեղական հիմնարկութիւնները... Մենք ունինք ընդարձակ աշխատանքների մի ծրագիր։ Երկաթուղիներ պիտի կառուցուին Սիւրիայի, Հայաստանի մէջ։ կրթութիւնը պիտի տարածուի ամենուրեք“ և այլն և այլն։

Իտիհաթեան պարագլուխը բարիքների լեռներ է խոստանում մեզ... առաջին անգամը չէ։ Նոյնը մօտաւորապէս խոստանում է սադրազամը։ Այդ բոլորը չի արգելում բնաւ, որ անմեղների արիւնը հոսէ Հայաստանի մէջ, որ քրդական աւազակութիւններն ու գազանութիւնները շարունակուին։

Հնարաւոր է, սակայն, որ այս անգամ երիտասարդ թիւրքերը անկեղծ լինին իրենց խոստումների գէթ մի մասի մէջ։ Ուզեն չուզեն — այժմ պէտք է բէֆորմների կողմնակից դառնան, պէտք է աշխատեն սանձահարել քրդերին և նոյնիսկ — հակառակ իրենց բնազդային գարշանքի դէպի ապակենտրոնացումը — պիտի ստիպուին որոշ քայլեր անել ապակենտրոնական ուղղութեամբ։

Ուզեն-չուզեն՝ պիտի ընդունեն և եւրոպացի խորհրդատուներ, պաշտօնեաներ, վերահսկիչներ։

Նէմէզիդան անողոք եղաւ դէպի „Իտիհաթը“։ Ի՞նչ հոյակապ երազներ—և ի՞նչ անկում.. Որպիսի՜ գոռոզ ազգայնական հաւատամք Սահմանադրութեան սկզբներում, երբ իրենց դիւրին յաղթանակով գինովցած՝ յաւակնում էին թելադրել իրենց կամքը ոչ միայն հպատակ ռայիաներին, հային, յոյնին, մակեդոնացուն... այլ և անգամ արևմտեան պետութիւններին։

Եւ այժմ ահա անկումի ու յուսահատութեան խորխորատում... ուր կը քաւեն թերևս Ադանայի մէջ նիւթած ոճիրը։ Երկու տարուայ մէջ սահմանադրական Թիւրքիան աւելի կորցրեց, քան հին Թիւրքիան ամբողջ 50 տարուայ ընթացքում. նա կորցրեց իր լայնարձակ հողերը Աֆրիկայում ու Եւրոպայում, առաջինից բոլորովին դուրս քշուեց, վերջինի մէջ պահպանում է դեռ մի ողորմելի և յուսահատ գոյութիւն։ Այժմ էլ— հերթը Ասիական Թիւրքիային է։ Եւ նրա մասին էլ „հոգում են“ արդէն արևմտեան „բժիշկները“։

Ո՞չ մի տիրապետ Եւրոպայի հասարակական կարծիքն ևս չինայեց „Իտիհաթին“, չնայած նրա ադերսական կոչերին, կազմակերպած ու եռանդուն պրոպագանդին, առատօրէն շռայլուած դրամներին։

Ինչպէ՞ս աջողէին։ Թիւրք վարիչները — հին և նոր համահաւասար — մի անգամ ընդմիշտ խարանուել ու վարկաբեկուել էին հանրային խղճի առջև՝ հայկական ջարդերից յետոյ... Եւ իրաւամբ ասել է Թիւրքական պարագլուխներից մինը, որ եթէ Թիւրքիոյ դատը այս գերագոյն ճգնաժամի միջոցին անգամ չգտաւ համակրանք Եւրոպայի մէջ,—դրա պատճառը ոչ այլ ինչ է, բայց եթէ հայոց կոտորածների անջնջելի յիշողութիւնը։

Պարիզի մէջ հաստատուած թիւրք պրոպագանդիստները կարողացան զինուորագրել միայն մի երկու ողորմելի թիւրքաժօլներ—Կլոդ Ֆարրեր և Պիէռ Լոտի—որոնք կաշուից դուրս են դալիս հաւատացնելու եւրոպական հասարակութեան, որ թիւրքերը մի գերազանց ցեղ են, որ նրանց դատը արդար է, որ ջարդերն ու գազանութիւնները նիւթողը բալկանեան զօրքերն են, որ թիւրքերի կատարած ջարդերը չափազանցուած են, որ հայերը ամենայետին թշնամականներն են, որ նրանք ապրել են դարերի ընթացքում թիւրքերի հաշուով, որպէս պարազիտ և այլն և այլն։

Այդ յիմարական զառանցանքների մէջ փայլեց մանաւանդ Կլոդ Ֆարրեր կոչուած մանեակը։

Թիւրքական ուրիշ վարձկաններ գնացին խանգարելու հայասէրների և այլ եւրոպացի իրաւէկների ատենախօսութիւնները, բաւական էր, որ լսէին մի ակնարկ թիւրք ռէժիմի այլանդակութիւնների մասին։

Վրիպեցին։ Երիտասարդ թիւրքիոյ այդ խայտաբղէտ էմիսարները չունեցան աւելի աջողութիւն, քան սուլթան Համիդի երբեմնի սպասաւորները, որ գալիս էին Եւրոպա և կաշառքներով ձգտում էին շահել հանրային կարծիքը։

Ինչպէ՞ս չվրիպէին։ Ահա հրատարակուեց հայերի ձեռքով և ամենածանր, ամենասոսկալի ամբաստանագիրը Իտիհաթեան շահատակութիւնների դէմ։ Յակոբ Պապիկեանի տեղեկագիրն է դա Ադանայի ողբերգութեան մասին, որ ամբողջապէս տպագրուում է „*Pour les Peuples d'Orient*“-ի մէջ, որի առթիւ մի հուժկու և խարանող յօդուած գրեց մեր Պրեսսանսէն, հրատարակեցին յօդուածներ և ֆրանսիական *La Revue* ու *Le Droit des Peuples* հանդէսները. գրեցին և Լոնդոնի *Times*-ը և Պարիզի *Temps*-ը։ Երկու մեծագոյն հասարակական օրգանները երկարօրէն ծանրացան այդ տեղեկագրի զգայացունց մերկացումների վրայ, ի ցոյց դրին մի քանիսը ողբացեալ Պապիկեանի առաջ բերած փաստերից և իրենց ցասումը յայտնեցին „Միութիւն ու Յառաջդիմութիւն“ կոչուած կուսակցութեանը, որի մարդկանց ձեռքով կազմակերպուել էր այդ զարհուրելի աղէտը։

Temps-ը մի երկար առաջնորդողի մէջ գրում է Պապիկեանի տեղեկագրի առթիւ.

„Այս փաստերը մի յուզիչ վաւերական են հայոց պատրիարքի արժանաւոր գանգատին... Հէվքէթ փաշան պատասխանեց, որ ինքը պիտի հովանաւորէ հայերին ոչ թէ խոստումներով, այլ գործով։ կուզենք յուսալ, որ իրողութիւնները կը հաստատեն այդ խօսքերը և որ Մահմուդ Հէվքէթը պիտի խզէ իր համերաշխութիւնը Ադանայի անպատիժ մնացած ջարդարարների հետ։ Այլապէս, այն կամիտէն, որի ներկայացուցիչն է նա կառավարութեան մէջ, ծանր պատասխանատուութիւններ կրստանձնէ — այլ ևս ոչ թէ Աֆրիկայի ու Եւրոպայի, այլ Ասիոյ մէջ“։

Պիտի կարողանա՞յ „Իտտիհատը“ երբևիցէ լիովին քաւել իր սատարած այդ վիթխարի ոճիրը—չգիտենք։ Պապիկեանի տեղեկագիրը մերկացնում է թիւրքական սահմանադրականների ճշմարիտ պատկերը իր վայրենի և այլանդակ մերկութեամբ։ Հայ ժողովուրդը և իր կուսակցութիւնները երբէք չեն մոռանայ և չեն ների արարքները այդ քսանեալի կամօռռայի, որ եւրոպականութեան շղարշի տակ պահպանում է իր դաժան, արիւնռուշտ մենգօլականութիւնը։ Հայ ժողովուրդը երբէք չի վստահի Հաճի Ադիլ բէյերի կազմակերպութեան ու կառավարութեան և Ադանայի արտասուելի մերկացումները կը կազմեն մի նոր, վճռական ու ահաւոր փաստ, որ կը հարկադրէ մեզ՝ ապաւինելու եւրոպական կօնտրօլին։

Վ.

ՊԱՏՄԱԿԱՆ

XI

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴՐԻ ԾԱԳՈՒՄԸ

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՄԷՋ

Խրիմեանի չուն Մեոյ դաւեսից դէպի Պոլիս. — Ժողովրդական «կեցցէ՛ներ» եւ յոյսեր. — Խրիմեան-պատրիարք եւ գաւառական հարստահարութիւնների խնդիրը.—«Ժողովրդական հանրագրութիւնք».—Երկիւղ եւ քաջութիւն Ազգային Ժողովի մէջ. — „Քէնտիների եւ ջօջերի ինտրիգը. — Հայաստանցու գանգատները Ազգային Խորհրդարանում. — Կորովի հատոր. — 1870-ի Տեղեկագիրը. — Զարիֆներ եւ դարմաններ. — 1871-ի հոկտեմբերեան պատմական նիստը. — Ընտրոս յայտարարութիւններ. — Փափազեան եւ Օտեան.—Գաղափարական փոխադարձութիւն եւ երկչոտ մեծամասնութիւն. — Հայկական հարցը զարնուում է աղայական չկամութեան. — Անվերջ ձգձգումներ. — Խրիմեանի յուսահատ ժեստերը. — Ընտրոս վեղարաւորներ. — Քաղաքական Ժողովը ընդդէմ ժողովրդական պատրիարքի.—Խրիմեանի փորձերը Սահմանադրութիւնը վերականգնելու.— Ֆիասկո եւ հրաժարական.—«Երթաս բարեա՛ւ, Արծուի».—

Դեռ 1865-ին կազմուած „Տեղեկագիր Քաղաքական Ժողովոյ Կեդր. Վարչութեան առ Ազգային Ընդհանուր Ժողով“ փաստագրի մէջ կարդում ենք „Հարստահարութիւնք“ խորագրի տակ.

Զանազան հարստահարութեանց ենթակայ են գլխաւորապէս Զարսանճախ, Քղի, Բաղէշ, Տիգրանակերտ, Վան, Մուշ, Մարաշ, Խարբերդ, Հաճին և այլն։

Զարսանճախի հայոց բողոքները իսկզբան Զեր Տէրէպէկիներու գործած անիրաւութեանց և արքունի տրոց անիրաւ բաշխման վրայ էին... Մէկ կողմէն Զարսանճախի հայը կը պնդէ, թէ իր վարած արտը և այգին և նստած տունն ու խանութը իրն է, միւս կողմէն Տէրէպէկին ի վաղուց անտի հողատեր դըտնուելուն արտօնութեան վրայ խրախալով, արտ, այգի, տուն և խանութ կը դրաւէ և կամ հարկի տակ կը ձգէ։

Բաղէշ՝ ստէպ քրդական արշաւախմբին ենթակայ ըլլալով, ժողովուրդը միշտ ահ ու դողի մէջ և անձնական ապահովութենէն զուրկ է...

Տիգրանակերտ կը տաղնապէր Ֆէթթահ պէկ անուն բռնաւորին ձեռքէն։ Վանայ ժողովուրդը Թիմուրիան պէկերուն լարած գաղտնի դարաններէն և ասոնց աքսորման վճռոյն համար անդադար կը թախանձէին...

Եւ միշտ Բ. Դուռը այդ պէկերու դէմ եղած ամբաստանեալների քննութիւնը կը յանձնէր տեղական իշխանութիւններին... այսինքն պարզապէս կը քնացնէր գործը։

Վրացւոց (երևի, չէրքէզների. Մ. Վ.) գաղթականութեան պատճառաւ... այլ և այլ հայաբնակ քաղաքներէն անիրաւութեանց տեսարան եղած են Երզնկայ, Բինկեան, Զմառա Եւդոկիա, Բալու և այլն։

Ապա նոյն փաստագրի մի քանի հակիրճ տողերի մէջ խտացրուած են անթիւ բողոքները տուրքերի ծանրութեան և կատարող ապօրինութիւնների ու կամայականութիւնների մասին...

Հայկական հարցը վախվխելով ներս էր սահում Ազգային Ժողովի մէջ, օգտուելով այն հանգամանքից, որ օսմանեան կառավարութիւնը Սահմանադրութեան մի յօդուածով անուղղակի թոյլատրում էր հայ համայնքին՝ ներկայացնել գանգատներ իր կրած հարստահարութիւնների առիթով։

Բայց հայոց հարստահարութիւնների ու պահանջների խնդիրը որոշակի հրապարակ դուրս եկաւ միայն այն օրից, երբ պատրիարքական գահ բարձրացաւ Խրիմեան (1869 թ.)։

Ժողովրդական մեծ քարոզչի անակնկալ թատերամուտը — իր հօտի գերագոյն ղեկավարի պաշտօնով — ինքնին արդէն մի ահագին սէնսասիօն էր։ Ժողովուրդը ոգևորուած կեցցէներով ճամբեց նրան Տարօնից—„Հայրի՛կ մեզի չմոռնաս“ գոչելով—նոյն ժողովուրդը գրկաբաց և անխառն ցնծութեամբ դիմաւորեց իր Հայրիկին սուլթանանիստ մայրաքաղաքում... „Կեցցէ՛ Խրիմեան“—հնչում էր անդադար գաւառական հազարաւոր մշակների կոկորդներից, սրտերը տրոփում էին, յոյսերը թևաւորուում—և ժողովրդական խանդավառ միամտութիւնը երազում էր, թէ ահա հասել է վայրկեանը, երբ ազգի սիրեցեալ հովիւը, նրա վշտերի ու գանգատների ամենահարազատ թարգմանը, պատրիարքական աթոռից պիտի լսեցնէ կառավարութեան ազգի

ձայնը, պիտի պահանջէ ու ստանայ բարենորոգումներ, դարմաններ...

„Վասպուրականի Արծիւը“ Պոլիս գալով, երկու հիմնական մտահոգութիւն ցոյց աւեց սկզբից ի վեր.

1. Վերաքննել Սահմանադրութիւնը, լայնացնել, յարմարեցնել այն գաւառական պահանջներին, վերակազմել հիմնականապէս այդ դժբախտ մեքենան, այդ „քառակուսի անիւը“, որ չէր կարող առաջ սահել, այլ շարունակ ճարճատում էր, հրաւիրելով պարբերաբար թշնամու ուշադրութիւնը, որ արդէն երկու անգամ տաս տարեայ ընթացքում մեկնել էր իր բիրտ թաթը և խափանել։

2. Բայց մանաւանդ ժողովրդական պատրիարքի անդիմադրելի տենչն էր՝ ուղղել Պոլսի հայութեան, Ազգային Ժողովի և կենտրոնական կառավարութեան աչքերը դէպի Հայաստան։

Ուշագրաւ է արդէն պատրիարքութեան առաջին ակտը, որ եղերակատակի բնոյթ ստացաւ։

Ես ուխտ կրնեմ ազգին ծառայելու—դիմում է Խրիմեան Ազգային Ժողովին—դուք ալ հետս պէտք է ուխտ ընէք... Մշոյ դաշտի և Վանայ ժողովուրդը իր վիճակի թեթևացումը կրսպասէ, ես խոստացած եմ նրան, պէտք է աշխատինք...

Դանդ, անհաճոյ տեսարան։ Սկեպտիկ պատրիարքը, որ շատ էլ, ըստ երևոյթին, հաւատ չունէր Ազգային Ժողովի մեծամասնութեան ժողովրդասէր տրամադրութեան վրայ, կրկնում է իր պահանջը. „ուխտեցէք գործակցել ինձ“... Իսկ Ժողովից առարկում են, թէ Սահմանադրութեան մէջ չկայ օրէնք, որ թելադրէր Ազգային Ժողովի անդամներին ես ուխտ անել։

Իմ վրայ Պոլսոյ պատրիարքի պէս մի նայիք. ես Հայաստանի ցաւոց պատկերն եմ։ Ձը գիտեմ, թէ իմ նախորդքս ի՞նչ կերպով միջնորդած են Տէրութեան՝ այս ցաւոց դարմանը խնդրելու համար, բայց ես ազգու միջնորդութիւն մը պիտի ընեմ...

Եւ ահա շուտով սկսում են թափուիլ Ազգային Ժողովի հասցէին այսպէս կոչուած „ժողովրդական հանրագրութիւնները“։ Սահմանադրութիւնը հիմնելուց ի վեր՝ առաջին անգամն էր, որ հրապարակ էր գալիս այդ նոր տարրը, „Ժողովրդական հանրագրութիւնը“, որ կազմուում էին գլխաւորապէս պոլսաբնակ հայաստանցի վշակների ձեռքով (գուցէ յաճախ նոյն Խրիմեանի թելադրութեամբ), նկարագրում էին երկրի մէջ կատարուող հարստահարութիւնները և աղիողորմ շեշտերով դարման էին խնդրում։

Ալէկոծուում է Ազգային Ժողովը։ Դող է ընկնում անդամներից շատերի մէջ։ Խրիմեան պահանջում է, որ Ժողովրդական հանրագրութիւնները կարդացուին Ազգային Խորհրդարանում։ Մի մասը հակառակում է, դիտելով այդ „վանգաւոր“ թղթերի ընթերցումը իբրև բացարձակ ըմբոստացում տէրութեան դէմ։

Եւ սկսւում է Խրիմեանի պատրիարքութեան ծանօթ քաօսը։ Էֆէնտիները բոյկոտ են անում Ազգային Ժողովն ու պատրիարքը, մեծամասնութիւն յաճախ չի լինում և նիստերը չեն կայանում։ Դառնացած և յուսահատ՝ Խրիմեան մի օր բացականչում է.

Ձիս նաւապետ կոչեցիք ազգային ալէկոծեալ նաւուն և նաւն ինձ յանձնելէ ետև ամենքնիդ ալ փախչելով, զիս միայնակ թողուցիք. կը նայեմ չորս կողմս, բայց նաւատի մը չեմ դտներ։ Եթէ դուք կը փախչիք, միթէ՞ ես չեմ կրնար. իմ թևերս աւելի ազատ են. վարդապետ ինչո՞ւ եղեր ենք. ազատութեան համար...

Վերջապէս, երկար ձգձգումներից ու վարանումներից յետոյ, Ազգային Ժողովի ջոջերը բերան են բաց անում „մահու և կենաց խնդրի“ մասին, հայկական խնդրի մասին։ Որոշում են կարդալ պոլսաբնակ հայաստանցիների հանրագիրը, ուր ի միջի այլոց ասուած էր.

Սրբազան տէր. Մեր գաւառաբնակ հայրենակից եղբարց տառապեալ վիճակը մեր սրտին մահացու խոց մըն է... Անտարակոյս, Ձեզի հետ մեկտեղ բոլոր կրօնի և ազգութեան պատուոյն նախանձախնդիր սրտերը այդ անլուր և անօրինակ եղեռնագործութիւններէն կը ճմլին։ Ուստի կը խնդրենք, որ այս աղէտից անմիջապէս դարման մը տաբի։

Ձայներ կային, որ ասում էին, թէ Ընդհանուր Ժողովի քննելիք բան չէ այս։ Ուրիշները գանգատուում էին, թէ ինչո՞ւ այդ հանրագիրները չեն ուղղուում քաղաքական Ժողովին։ Ուրիշները խորհուրդ էին տալիս սպասել, մինչև որ ստացուին տեղեկութիւններ գաւառներից։ Այս կամ այն ձևով կամենում էին ջուրը գցել հայկական հարցը...

Գտնուեցան, այնուամենայնիւ, շիտակ ու արի հայ քաղաքացիներ, որոնց չէր իսպառ անդամալուծել աւանդական երկչոտութիւնն ու սարկամտութիւնը և որոնք համարձակ ձայն բարձրացրին հարստահարութիւնների ցաւոտ խնդրի առթիւ։

Ցիշատակենք երկու խօսքով մի քանիսը այդ կորովի ու մեղադրական ճառերից *).

Իփէքճեան էֆէնտի.

Միթէ՞ ուրիշ մասնաւոր բողոքագիրներ ալ եկած չէին վարչութեան և միթէ՞ Բ. Դրան հաղորդուած չէին։ Ընդհանուրը մասնաւորներէ կը բաղկանայ. մասնաւոր եղելութիւններու առթիւ եղած բողոքները գոհացուցիչ վախճան մը չեն ընդունած և ասկէ ծագած է ահա այս հանրական բողոքի գաղափարը...

„Խնդրէն կը շեղիք“—միջամտում է ուլտրա-խոհական ատենապետը, տեսնելով վերջին բառերի մէջ բողոք ընդդէմ կենտրոնական կառավարութեան։

Զաւեշտական է Իփէքճեանի ըէպլիկը.

Գաւառներէն եկած բողոքները հաղորդուած են Բ. Դրան և Տէրութիւնն ալ հոգ տարած է, բայց գաւառներէն դադրած չեն երբէք հարստահարեալ ժողովրդեան հեծեծումները։

Երեմիա եպիսկոպոս.

Ստիպուած եմ իմ խղճիս պարտք, հայրենեացս պարտք, մարդկութեան պարտք կատարել, առանց ինչ երկիւղի և

*) Տես Ատենագրութիւնք Ազգային Ժողովոյ. Նիստ 25 Հոկտ. 1870 թ.։

տարակուսանաց, զի պիտոյ համառօտիւ բացատրել մեր եղբարց վրայ ծանրացած աղէտալի հարուածներ ու հարստահարութիւնք...

Եւ յայտարարում է, որ հայաստանցին երկու կերպ կը հարստահարւի. նախ ներքին անմիաբանութիւնից, մատնիչ ու դաւաճան հայերից, ապա և արտաքին թշնամիներից։ Արտաքին բռնաւորներն են — քիւրդերը. հոչակաւոր պէյեր... Ցիշում է Խզնայ շէյխ Սապատուլլահը և նրա որդի Ջալալեդդինը։

Հոն բռնաւորաց խումբ մը կայ — ասում է մի այլ երեսփոխան — քիւրտն է անի, որ մեզի պէս հպատակ չէ տէրութեան, որ տուրք չտար, այլ թշնաւ հայը կը կեղեքէ և կ'ասպատակէ զէն 'ի ձեռին...

Միջամտում է ինքը պատրիարք-Խրիմեանը և տալիս է իր մեկնութիւնը չարիքի պատճառների մասին։

Բան մը կայ, որ պիտի բացատրեմ վարդապետօրէն։ Հայաստանի մէջ հարստահարութիւնը միշտ կայ և պիտի շարունակէ, քանի որ հոն երկու եղբայր, երկու ժողովուրդ կը բնակին, որոց մէկի ձեռք աւետարան և միւսին ձեռք զուրան կայ... Անկարելի է, որ քիւրդն ու հայը իրարու հետ հաշտուին, մանաւանդ որ մէկը սուր ունի և կը հարուածէ, միւսն աւետարան ունի միայն և կը չարչարւի...

Եւ Խրիմեան մէկ էական դարման է առաջարկում. այն՝ որ քրիստոնեայ և մահմեդական հաւասարապէս պաշտօնեայ լինին։

Երբ հաւասարութեան սկզբունքն ի գործ դրւի և քիւրդը տեսնէ, որ քրիստոնէին մէջքն այ պաշտօնական թուր մը կայ կախուած և կուսակալի պաշտօն կը բարձրանայ, այն ատեն կըմբռնէ օրինագրքի ոգին։

Պատրիարքը այդ իմաստով էլ դիմումն պիտի անէ օսմանեան կառավարութեան։

Քիչ յետոյ, 27 նոյեմբերի նիստի մէջ (1870 թ.) նա նորէն ծանրանում է այն պատճառների վրայ, որոնք — Խրիմեանական արտայայտութեամբ — „ազգը բարակացաւի մէջ դրած են“։ Այս անգամ ծանրանում է ներքին պատճառների վրայ, գիտակցութեան, ինքնաճանաչութեան պակասի վրայ, ժողովրդի տգիտութեան ու անշարժութեան վրայ, որ պատուանդանն են հայոց ստրկութեան...

Ժողովուրդն անմունչ ոչխար մը դարձած, ոչ իւր իրաւունքներն կը ճանչէ, ոչ պիտոյքները կըգդայ և ոչ օրինաց տեղեկութիւն ունի... Աշխարհի արդի դրութեան համեմատ՝ ով որ տգէտ է, պիտի բռնաբարւի և լոյսը միայն ազատութիւն վայելէ...

Վիճաբանութիւնները քանի գնում տաքանում են։ Հին, պատկառելի գործիչներից մի քանիսը, որ եղած էին Ազգային Վերածնութեան սիւները — Ռուսինեան, Սերվիչեն և այլն — պահպանում են խոհեմ, զգուշաւոր լռութիւն այդ հանդիսաւոր նիստերի մէջ և մեծ մասամբ նոր դէմքեր են, որ անվախ, հմարձակ բեմ են նետւում իրենց կծու քննադատութիւններով ընդդէմ թիւրք-քիւրդական այլանդակ ռէժիմի։

Ահա և երիտասարդ Ներսէս եպիսկոպոսը ամբիոնի վրայ, — ապագայ Վարժապետեանը.

Օսմանեան տէրութեան սկզբնաւորութեան ատեն հարստահարութիւն չկար (sic), զի զուրանի ոգին ճշտիւ կը մեկնուէր... Բայց ի վերջոյ վարդապետութիւնը այլ իմաստ մեկնած է զանի...

Հարստահարութիւններու գլխաւոր պատճառն է. մէկ կողմէ գաւառներու պաշտօնատարաց անձեռնհասութիւնը և միւս կողմէն մերազնէից տգիտութիւնը... Ինչո՞ւ հայը իրը քաղաքացի ամեն պարտուց մասնակցի և իրաւունքներէն զուրկ մնայ. ինչո՞ւ այս վիճակը տէրութեան ուշադրութեանը չի ներկայացնի։

Եւ Ներսէս առաջարկում է Քննիչ Ցանձնաժողով ընտրել և հանդիսաւորապէս ներկայացնել խնդիրը Բ. Դրան։

* *

Զափազանց հետաքրքրական է այն արիւնոտ պատմական փաստաթուղթը, այն առաջին տեղեկագիրը, որ կազմուեցաւ 1870-ին, Ազգային Ընդհանուր Ժողովի հրահանգով և նրա ընտրած Ցանձնաժողովի ձեռքով։

Նա կազմուած էր այն մի շարք մասնաւոր տեղեկագիրների հիման վրայ, որ եկել էին — նոյն Ազգային Ժողովի յանձնարարութեամբ — Հայաստանի այլ և այլ գաւառներից։ Նա ամփոփում էր և մի մասը այն հարուստ նիւթերի, որ տասնեակ տարիներից ի վեր դիզուել էին Հայոց Պատրիարքարանում։ Նա, այնուամենայնիւ, դեռ չէր տալիս լիակատար պատկերը Թիւրքահայոց դժոխային գոյութեան, չէր բնաւ ներկայացնում հայ ժողովրդի հսկայական դատապրակը... Դեռ դժգոյն էր և վեհերոտ այդ առաջին հանդիսաւոր Ցիշատակագիրը, դեռ չէին էլ հասել հայ Քննիչ Ցանձնաժողովի ականջներին բոլոր գաւառների հարստահարութեանց արձագանքները. մի շարք վայրերի հայ առաջնորդները — զարհուրած վրիժառութեան ահաւոր հեռապատկերից — աղաչում էին չհրատարակել այն արիւնռուշտ գազանների անունները, որոնք իբրև մի մի ինքնակալ, միահեծան տէրեր, դարձել էին պատուհաս հայ խաղաղ ժողովրդի համար։ Իսկ մի շարք գաւառներ — Իզմիր, Բրուսսա, Աղթամար, Սեբաստիա, Քեօթահեա, Ցիվրիկ, Բալու չէին էլ ղրկել ոևէ տեղեկագիր — նոյն երկիւղից, անտարակոյս։

Բայց և այնպէս, այդ կիսատ ու երկչոտ փաստագիրն անգամ ահագին լոյս էր սփռում երկրի կացութեան վրայ, մերկացնում էր նրա էական ու մշտնջենաւոր վէրքերը։ Ցանձնաժողովը, Ներսէսի նախագահութեամբ, աշխատեց եռանդով։ Շարիքները, նրանց հիմնական պատճառները որոշուած են, դասակարգուած (classé)։

Առաջին անգամը տրւում էր Հայաստանի կացութեան շատ թէ քիչ լուրջ անալիզ — վերլուծումն այն բոլոր պատուհասների, որ կրծում ու լափում էին հայութեան օրգանիզմը։

Առաջին անգամը, մանաւանդ, տուրքերի բարդ ու ոճրանիւթ մեքանիզմը հրապարակ էր դրւում շատ թէ քիչ լուսաբանուած։

Առաջին անգամը ցուցադրւում էր հայ ձեռքերով քրդական աւատապետութեան էութիւնը, այն սոսկալի խարազանը, որ ամենից աւելի էր կորացրել հայաստանցու մէջքը, որ ամենից աւելի էր ցամաքեցրել նրա կեանքի ու ապրուստի աղբիւրները։

Վերջապէս, առաջին անգամն էր, որ հայկական խնդիրը, իր հրատապ պահանջներով, ամրապնդուած հազարաւոր աղաղակող փաստերով, պիտի երթար բաղխելու օսմանեան կառավարութեան դուռը, պիտի ներկայացուէր սադրազամին և սուլթանին։

Տեղեկագիրը ասում է, որ ամենից շատ ասպատակութեան ու հարստահարութեան ենթակայ են Էրզրումի և Դիարբեկիրի վիլայէթները, այն է՝ Վան, Քղի, Դերջան, Բաղէշ, Մուշ, Զարսանճաք, Տիգրանակերտ, Սղերդ, որ այդ գաւառները հարստահարող աւազակների անունները ծանօթ են յականէ յանուանէ և նրանց արարքները տեղեկագրուած... որ „այնպիսի եղելութիւններ կան, որ ընթերցողին սոսկում կուտան“... որ Սահմանադրութեան շնորհած ազգային գաւառական մարմինները անզօր են այդ սանձարձակ կամայականութիւնների դէմ, որ „եպիսկոպոսները չէն կրնար միջնորդել այդպիսի ցաւոց“, որ պաշտօնեաները ծաղրում են նրանց ու յետ մղում, „ձեր տեղը եկեղեցին է“ ասելով... Տեղեկագիրը յայտարարում է, որ Բ. Դրան միջնորդութեամբ հայերը յաղոլած են զուտ կրօնական բնոյթ ունեցող հարցերի մէջ միայն, որ բոլոր միւս պարբերական թագրիրները, թիւով 529 (մինչև 1870 թուականը), մնացել են անհետևանք, որ այդ թագրիրների նիւթ են եղել՝ կառավարական պաշտօնեաների զեղծումները, կանանց և մանկանց բռնի իսլամացումը, ապա և աւազակութիւններ, առևանգութիւններ, սպանութիւններ, „եկեղեցեաց շինութեանց և կոչնակահարութեանց արգելում“... ննջեցելոց յուղարկաւորութեան և կրօնական հանդիսից արգելում և այլն. ապա քանի թագրիրներ քրիստոնէի վկայութեան չընդունելու մասին, հարկերի բաշխման ու հաւաքման վերաբերմամբ և այլն և այլն։

Եւ Քննիչ Ցանձնաժողովը արիաբար եզրակացնում է, որ Բ. Դրան հրամանագիրները „անբաւական եղած են“... և որ, հետևաբար, պէտք է փոխել թագրիրների սովորական ձևը և դիմել արտակարգ միջոցի... Բ. Դուռը, սովորական հրամանագիրներէն դուրս, պէտք է ուրիշ եղանակի մը դիմէ։ Ցանձնաժողովը իր կողմից ցոյց է տալիս մի քանի դարմաններ։ Նա նկատում է, որ տուրքերի խնդրի մէջ գաւառացիք առանձնապէս գանգատւում են միլթեզիմներից, հարկահաւաքներից։

Կրնանք ըսել, որ եթէ ժողովուրդը 100 ղուրուշ կը վճարէ, կէսը միայն և թերևս աւելի նուազը կը մնէ արքունի գանձը... Այս հրէշաւոր կեղեքումների շնորհիւ, աշխատանքի գլխաւոր աղբիւրը, երկրագործութիւնը „միլթեզիմներուն ձեռք հոգեվարք եղած է“։

Ժողովուրդը աղիողորմ գանգատւում էր նաև զինուորական տուրքի առթիւ („Ասկեր պէտելիյէ)։ Բաւական չէ, ասում էր նա, որ այդ տուրքը ինքնին արդէն մի հրէշաւոր ապօրինութիւն էր (քանի որ ամեն մի արու զաւակ, նորածինից մինչև զառամեալը որոշ տուրք պիտի վճարէր, շուրջ 28 ղուրուշ, այլ և ազգահամարի ճշտութիւնը չլինելով, մեռնողների, գաղթողների տուրքն ևս մնացեալներից էին պահանջում... Ուստի յաճախ կրօնափոխ էին լինում, որպէս զի ազատուին պակողների փոխարէն վճարելուց...

Պաշտօնեաների զեղծումները վերացնելու համար, Ցանձնաժողովը թելադրում է, որ կառավարութիւնը կօնտրոլ սահմանէ նրանց վրայ...

Ապա թելադրում է. 1. զինաթափ անել քրդերին, չէրքէզներին և այլ նոմադ ու թալանչի լեռնականներին, և կամ հայ տարրին ևս իրաւունք տալ զինւելու։

2. Զինուորական տրոց փոխարէն—զինուոր տալ... Զէ՞, մենք էլ քաղաքացիներ ենք, ասում են Տեղեկագրի խմբագրողները, պատրաստ մեր արիւնը թափելու մահմեդական հայրենակիցների հետ, ընդհանուր հայրենիքի համար...

Նախ քան կառավարութեան ներկայացուիլը, Տեղեկագիրը պիտի անցնէր „հայկական պարլամենտի“ քննութեան բովից, պիտի գար Ազգային Ժողով։

Գիտակ վայրկեանի լրջութեան, ժողովրդի ծանր, տագնապալի կացութեան՝ Ազգային Ժողովի պարտաճանաչ, գաղափարական փոքրամասնութիւնը ամեն կերպ աշխատեց, որպէս զի վիճաբանութիւնները համազգային ամենացաւոտ խնդրի շուրջը մնան պատշաճ բարձրութեան վրայ, որպէս զի խնդիրը արծարծուէր ընդարձակութեամբ ու խորութեամբ, առանց երկչոտ և անարժան վարագուրումների ու վերապահումների։

Եւ տեղի ունեցաւ 1871-ի հոկտեմբեր 22-ի պատմական, հանդիսաւոր նիստը։ Գուցէ երբէք Ղալաթայի հայկական խօսարանը չէր ունեցել այնքան հմայք ու հրապոյր, ինչպէս այդ օրը, երբ հռետորները — բոլոր խաւերի ու կարծիքների պատկանող—մին միւսի եռևից բեմ էին գալիս իրենց շահեկան դատողութիւններով հայրենիքի կացութեան մասին և իւրաքանչիւրը առաջադրում էր իր դարմանները։ Լսեցին այգտեղ հուժկու քննադատականներ ռէժիմի դէմ, բուռն, ըմբոստ յայտարարութիւններ, սիրուն ու յուզիչ ֆիլիպիկներ, որոնց կարդալիս զգում էք ձեզ ազատ Ամերիկայի մի հայկական միտինգի մէջ...

Ցիշատակենք մի քանի գծեր այդ անմոռանալի ժողովից *)։

*) Տես Ատենագրութիւնք Ազգային Ժողովոյ, 1871 թ.։

Ահա Սա. Փափազեանը, որ Մոլեռանդ պաշտպան էր հայերի զինւորագրութեան.

Զինւորագրութիւնը—ասում է նա—բարոյապէս պիտի զօրացընէ հայ ժողովուրդը և զգացընէ, որ ինք ալ երկրին տէրն է... Համահաւասար պարտաւոր իր օսմանցի հայրենակցին հետ իր ծառայութիւնը մատուցանել երկրին։ Այժմ որ մահմեդական ժողովրդեան հետ իրրև ծառայ ընդ տեառն կը վարուի, ան ատեն պիտի փոխուի... Այն խեղճ հայը, որ այժմ իր կնոջ առևանգութեանը կամ զաւկին յափշտակութեան առջև մորմոքած, թևերը ծալած կը կենայ սոսկումէն կամ աղեխարշ սրտով կը խոնարհի յ՚աղերս, որպէս զի ի գութ շարժի բռնաւորին ջիրտը... այն ատեն այդպիսի տխուր և սրտաճմլիկ պարագայի մէջ չպիտի թուլնայ, զի ստրկութեան գաղափարն այլ և՝ զինքը չպաշարէր, այլ ոգի՞ պիտի առնու և ինքզինքը պաշտպանելու փորձն ընել պիտի ճգնի կատաղի մոլեգնութեամբ սրտապինդ քանզքիւրտն պիտի կուսի անոր հետ և քաջութեամբ իր պատիւն ու կինը կամ զաւակը պիտի ազատէ անօրէնին ձեռքէն և զանի վանէ...

Հռետորը միշտ աւելի և աւելի յափշտակւում է, ոնը բարձրացնում և զգում էք, որ զինւորագրութեան պատրուակի տակ իրօք մարտական, յեղափոխական պրոպագանդ է անում Ազգային Ժողովի բեմից.

Զէնքը ներկայ ժամանակիս մէջ պատուոյ, ընչից և կենաց պահպանութեան հարկաւոր պիտոյք մ՚է։ Ասկէ զատ, եթէ քննենք, թէ որչափ պանդուխտ ունինք այժմ, ասոնց պատճառաւ որչափ երկիր անմշակ մնացած է, որչափ զաւակ տարէ տարի կը կորսնցնենք, որչափ պանդուխտ օտարութեան մէջ կը կորսուին և այլն և այլն, այն ատեն լաւ կը հասկնանք, թէ գաւառացիք փոխանակ կեանքն ամբողջ հողագործութեամբ անցնելու, եթէ անոր մէկ մասը վառօդ գործածելու սուր շողացնելու նուիրեն, իրենց քրտանց արդիւնքը պահպանելու նիւթական շահու առաւելութիւն մը երևան պիտի գայ...

Ահա Գրիգոր Օտեան, որ թողնում է ատենապետի բազկաթոռը և փր հերթին մի harangue է ուղղում վարանոտ Ազգային Ժողովին.

Զինուական տուրքը մեր տկարութեան տուրքն է։ Հայը, ինչպէս ուրիշ ազ-մահմեդական ազգեր, հայրենեաց համար արիւն թափելու իրրև թէ անկարող զէնք գործածելու, բոլոր երկրին պաշտպանութիւնը մէկ ազգ մը վրան առած է և այս պաշտպանութեան փոխարէն միւս ազգերը հարկ մը կը վճարեն... Այդպիսի դրութեան մէջ հաւասարութիւնն անկարելի է... Երբ կինուորին յատուկ եղած պատուոյ զգացումը զարգանայ մեր մէջ ալ, այն ատեն հայը պիտի գտնէ իր նախնի նկարագիրը, զոր պիտի վերականգնէ գլորմանս սապականութեան վիճակէն, ուր ընկած է *)... Դարերով գերութեան վիճակի հետևանք... Յայտնենք աշխարհին, թէ մենք ալ մարդ ենք և արիութեան ընդունակ...

*) Օտեան ևս համարում է նախայեղափոխական շրջանը „գլորման ու ապականութեան վիճակ", մի կատարեալ chute, déchéance... Ի՞նչ կ՚ասեն իրենց մեծարած կուռքի դէմ մեր այն խմաստուն իդէօլոգները—թիւրքահայ և ռուսահայ—որոնք ցաւով ու կարօտով երանի տուին այդ հին բարի ժամանակին և անխնայ քարկոծեցին յեղափոխականներին, որ եկան փոթորկելու ապականութեան ու անասնացման այդ մթնոլորտը...

Արժէ և գերազանցապէս այժմէական է՝ կարդալ ու կրկնել այս կորովի և բանական ճառերը ներկայ Ազգային Ժողովի ultra-խոհեմ և թուլամորթ մեծամասնութեան, որի ուղղի մէջ „ինքնապաշտպանութիւն" բառն անգամ մի սարսափելի և անհանդուրժելի պատուհասի բնոյթ է առնում...

Դարձեալ պիտի ասենք. tempora non mutantur! Այն ժամանակ ևս կար նոյն խոհեմ, աստուածավախ և սուլթանավախ մեծամասնութիւնը, որ ամեն կերպ ձրգտում էր արգելք լինել գաղափարական և կորովի փոքրամասնութեան ծրագիրներին։ Մեր ազգային ջոջերին հաճելի չէր գաւառական հարստահարութիւնների, „հայկական խնդրի" արծարծումը Ազգային Ժողովի մէջ, հաճելի չէին մանաւանդ այդ ըմբոստ ճառերը թիւրքական ռէժիմի այլանդակութիւնների դէմ. հաճելի չէր այն ամենը, որ գալիս էր վրդովելու հայ բուրժուայի, պօլսահայի անդորրութիւնը։

Եւ ահա Յանձնաժողովի Տեղեկագիրը զարնուեց նոյն աղայական ապիկարութեան, չկամութեան։ Խրիմեան և ժողովականների մի մասը յորդորում էին շտապել, ներկայացնել Տեղեկագիրը կենարօնական կառավարութեան։ Իսկ Ժողովի մեծամասնութիւնը դիտմամբ ձգձգում էր, ուշացնում, շարունակ հանդէս բերելով նոր, աննշան, երկրորդական խնդիրներ, թաղային, առաջնորդական, կաթողիկոսական, Սսի, Աղթամարի, Երուսաղէմի և այլն։

1872-ի փետրուար 18-ի նիստի մէջ Խրիմեան, ճարահատեալ միջամտեց փոքր ինչ միապետական ձևով և ուղղեց իր ուժգին յորդորը Ժողովին.

Իրրև դիտող և հովիւ, պատրիարքութեան բարձր գահէն, կը համարձակիմ ասել, ես ձենէ առաւել կը տեսնեմ Ազգին վերահաս վտանգները։ Թողէք, ուրեմն, և այդ իրաւունքը չնորհեցէք ինձի, թէ ո՞ր խնդիրն է կարևոր, ո՞րը նախադասելի... Ուստի իրրև նուիրական պարտք, պէտք է ի բաց թողում այն խնդիրներ, յորոց յապաղմանէ ոչինչ վնաս չեմ տեսներ և միայն այն խնդիրներ վարեմ յառաջ, որոց լուծումը Ժողովրդեան ներկայ աղէտները կը բառնայ... Ժողովրդեան համար ամեն բան պէտք է զոհել, զի Ժողովրդեան ձայնն ամենէն բարձր կ՚ելնէ (ծափահարութիւն)...

Ապա մի ցասկոտ յորդոր կարդաց նաև Երեմիա եպիսկոպոսը.

Ես որ Հայաստանի ամեն անկիւնները շրջած, ականատես եղած եմ միլիոնաւոր հայ ժողովրդեան կրած զրկանաց, ցաւոց և նեղութեանց, կը խնդրեմ ու կը պաղատիմ, որ ով որ խիղճ ու գութ ունի իր սրտի մէջ, գաւառական հարստահարութեանց խնդիրն որոշէ ընել նախադաս, գերադաս և յառաջադաս... Անձնական շահեր շատ անգամ այս խնդրոյն արգելք հանդիսացան, որոյ դէմ ես յաւիտեան պիտի բողոքեմ... Վասն զի այդ անձնական շահերու դէմ (աղաներին է ակնարկում. Մ. Վ.) հայութեան ոգին դառնապէս կը բողոքէ և երկիր կը սարսի (ծափեր)...

Թողումք կրօնական կերպարանօք շպարեալ անտի վէճերն ու կռիւները. այդ վէճերն էին, որ զմեզ 36 միլիոնէն ափ մը ժողովուրդ մնալու չափ սպառեցին.—կաթողիկոսութիւն, պատրիարքութիւն, եպիսկոպոսութիւն, Աթոռ և այլն, ամենայն կարգ ու պաշտօնի խնդիր իրենց նշանակութիւնը կը կորսնցնեն Ժողովրդեան տառապանաց խնդրոյն քով. վասն զի

այն ամենայն ժողովրդէն կը ծնանին, ժողովրդեան համար են և առանց անոր բան մը չեն արժեր...

Ջօջերից մէկը, Պէկեան էֆէնտի — նշանաւոր Պէկեանը, որ յետագայում (1878-ին) այնքան պիտի զբաղեցնէ և ալէկոծէ Ազգային Ժողովն ու պատրիարք Վարժապետեանին — խայթուածի պէս միջամտեց.

„Մեր եկեղեցականաց զգացածը մենք ալ կը զգանք“...

Եւ առաջարկեց մտցնել մի քանի փոփոխութիւններ Ցեղեկագրի մէջ. այն է՝ 1. Դուրս գցել „մոլեռանդութիւն“ բառը (մահմեդականների վերաբերեալ) և դնել „կրօնական խտրութիւն“;

2. Ապա՝ Ցեղեկագրի մէջ ասւած է. „կամ քրդաց ձեռքէն զէնքն առնուի և կամ հայոց ձեռքը զէնք տրուի“...

Այս խօսքը բնաւին աղէկ չէ — ասում է Պէկեան էֆէնտի — կարծեմ միայն „քրդաց ձեռքի զէնքն առնուի ըսելը“ բաւական է... Իսկ հայոց ձեռքը զէնք տրուի ըսելը ծանր է և ես պատշաճ չեմ համարիր...

Այս երկու դիտողութիւնները սքանչելիօրէն յատկանշում են այն ժամանակւայ և բոլոր ժամանակների հայ-աղայական մտայնութիւնը *)...

Սեղծւել էր մի ծանր, անշնչելի մթնոլորտ հայկական անդամալոյծ պարլամենտում։ Եւ ամենից աւելի ծանր էր այն՝ ժողովրդի ցաւերով տառապող պատրիարքի համար։ Նա թողել էր իր Տարօնն ու Վարագը, եկել էր պատրիարքութեան, որպէս զի քիչ-շատ նպաստել կարողանայ գաւառացոց վիճակի բարւոքման։ Բայց չորս տարւայ պատրիարքութիւնը ոչինչ արդիւնք չտւեց այդ հիմնական և չարատանջ խնդրի շուրջը։ Խոչընդոտները գալիս էին ոչ միայն թիւրք կառավարութիւնից, այլ նոյնիսկ հարազատ, ցեղակից աղաներից, որոնց գծուծ ինտրիգները և եսամոլ ու յանցաւոր անտարբերութիւնը աւելի ևս քաջալերում էին սուլթանական կառավարութիւնը իր հայասպան տակտիկի մէջ...

Այդ հողի վրայ և միշտ աւելի ու աւելի արծարծւեց ընդհարումը Խրիմեանի և քաղաքական Ժողովի միջև։

Խրիմեանի էական առաջարկն էր — փոխել Ազգային Սահմանադրութեան մէջ տիրող վարչական ձևը, սահմանել աշխատանքի բաժանումն, զատել Պոլսոյ և գաւառի գործերը, ըստ կարելւոյն արագացնել գործավարութիւնը... Որովհետև, ասում էր նա, անհնարին է և վնասակար՝ կենտրոնացնել ազգային բովանդակ ճակատագրի տնօրինումը՝ Պոլսի մէջ, ի դէմս մի Ժողովի, որ բնաւ չէր ներկայացնում Ազգը։ Նա կուզէր լայնացնել պատրիարքի իրաւասութիւնը, առանց սեղմելու Ժողովի իրաւունքները։ Նա առաջարկում էր — „քանի որ 140 երեսփոխան գտնելը խիստ դժւարին է և այդքան բազմութիւնը գործ չի կրնար տեսնել“ — իջեցնել երեսփոխանների թիւը 50-ի, բայց դրանցից 10-ը միայն եկեղեցական, իսկ մնացածը՝ հաւասար թւով գաւառացի և պոլսեցի (20-ական հոգի)։

Երկար ու ապարդիւն պայքարեց Խրիմեանը Սահմանադրութեան վերաքննութեան համար. հակառակորդները անդրդւելի էին։ Քաղաքական Ժողովը յամառել էր իր անհաշտ ընդդիմութեան մէջ, հռչակել էր Խրիմեանին „հակասահմանադրական“ և մինչև իսկ փորձեր էր անում գրգռելու ժողովրդին Խրիմեանի դէմ։ Պատմութիւնը արտասանել է արդէն իր անողոք դատավճիռը այն կուրացած խմբակի դէմ, որ ղեկավարում էր այդ տխուր, հակաժողովրդական դաւը և որի անդամներից էր, տարաբախտաբար, Մատթէոս Իզմիրլեան։

Խրիմեան սահմանադրական ծնած է... Խիստ դժւարին է զանի հակասահմանադրական ամբաստանել։ Ես Սահմանադրութիւնը գրկել կուզեմ, բայց չեմ ուզեր զանի այնչափ ճշտել ու սեղմել, մինչև գրկիս մէջ մեռնի...

Այսպէս էր պատասխանում Վարագի Արծիւը Սահմանադրութեան ֆորմալիստ տառամոլներին, որոնց աւելի հետաքրքրում էր կանոնադրութեան credo-ի մի ստորակէտը, քան գաւառացի միլիոնաւոր հայ ժողովրդի հեծեծանքը։

Պայքարը չէր կարող անվերջ շարունակւել։ Խրիմեան ստիպւեց ի վերջոյ հրաժարւիլ (1873 թ. օգոստոս)։ Հրաժարւեց — ինչպէս ինքն էր ասում իր հրաժարական նամակում — ձանձրոյթից և յուսահատութիւնից։

... Թոյլ տուէք այս աթոռէն ելնեմ... Թոյլ տուէք, եթէ իրրև պատրիարք չկրցայ, իբրև Խրիմեան վարդապետ գործել... Երթա՞ս բարեաւ, Արծուի, ասացէք։ Գնա՛ գտիր Վարագ, քո սիրած խուցն ու գրիչ և սակաւիկ մի թանապուր, հոն մնացիր, զի նաւ խռովեալ փութայ ի նաւահանգիստ...

Ժողովուրդը հանրագրութեամբ դիմում է Ազգային Ժողովին. „մեր սիրելի Հայրիկի հրաժարականը չընդունի՞“... Բայց արդէն ուշ էր։

Այդպէս փակւեցաւ մեր նորագոյն պատմութեան ամենատխուր և ամենայուզիչ դրւագներից մին։ „Հայկական խնդիրը“ ծնունդ առաւ և իր առաջին քայլերի մէջ իսկ զարնւեց ծանր, ահաւոր խոչընդոտների...

Մ. ՎԱՐԱՆԴԵԱՆ

---

*) Աւելորդ է յիշատակել, որ գաւառական հարստահարութիւնների Ցեղեկագիրները այնքան բուռն վէճերից ու տենդային աշխատանքներից յետոյ, դատապարտւած էր... վիժելու։ Քաղաքական Ժողովի մերատումներից ու փոփոխումներից յետոյ, նա ներկայացւեց կառավարութեան։ Ընտրւեց վերջինի հրահանգով մի խառն Ցանձնաժողով, որ տեղն ու տեղը քննութիւն կատարելով, երևան հանեց Ցեղեկագրի մէջ փաստւած զեղծումներն ու ապօրինութիւնները։ Սակայն... այդ արիւնոտ գոկումենտները գնացին այնուհետև հանգստանալու տաճկական մութ, անյատակ արշիվներում։ Ոչ մի սանկցիա չհետևւեց կառավարութեան կողմից, ոչ մի փորձ՝ սանձահարելու ոճիրներն ու ոճրագործները։

ԹԵՐԹՕՆ

ԻՄ ԲԱՆԴԸ

„Ահաւասիկ ժամը գիշերւայ, որ այնքան պատշաճ է ամենասև ոճիրների համար“։

Շէքսպիր, «Համլէտ».

II

ԿԷՍ ԳԻՇԵՐԻՑ ԱՆՑ

Բնակարանիս դուռը շառաչում էր ուժգին, անընդհատ հարուածների տակ։

— Ո՞վ է, հարցրի ես մօտենալով։

— Այստե՞ղ է ապրում X...ը.— իմ անունը տուին։

— Այո՛, ի՞նչ էք կամենում։

— Յանուն օրէնքի, բացէ՛ք դուռը։

Պատասխան չուի...

Գիտէի, որ ժանդարմական խուզարկութիւն է, գիտէի, որ վերջի վերջոյ պիտի բացեմ դուռը. անմտութիւն էր դիմադրութեան ամենաչնչին փորձ անել, ևս առաւել, որ թագցնելու բան չունէի, բայց և այնպէս մնացի լուռ ու անշարժ և դուռը բաց չէի անում։ Այնպէս զզւելի էր այդ „յանուն օրէնքին“, այնպէս ծանր էր հնազանդւել ուշ գիշերային այդ վայրագ արշաւանքին։

— Բացէք դուռը, կրկնուեց դրսից աւելի վճռական, աւելի խրոխտ։

Եւ դուռը բացուեց...

Քաղաքային ու գաղտնի ոստիկանների, լրտեսների, ժանդարմների մի ամբողջ վոհմակ ներս խուժեց. առաջնորդն էր պահնորդական բաժնի (օխրանայի) փոխգնդապետ Բօլշինսկի, ազգով լեհ, Եան Սաբիեսկու, Կոստիւշկոի, Միցկեվիչի, Սլօվացկու, Սինկեվիչի հայրենակիցը, ճխլւած, արիւնոտուած Լեհաստանի զաւակ։ Ի՞նչ դառն հեգնութիւն այս լեհը... Նա նուրբ դիմագծեր ունէր, բաց գոյն, կապոյտ, մանրիկ աչքեր, սլաւոնական բիթ, որ հարբեցութեան հետք չէր կրում վրան, սուր ծնօտ, յամառօրէն իրար սղմւած շրթունքներ։ Շարժումները վայելուչ, գրեթէ սալոնական, որ չգիտեմ սակայն, ինչ մի նողկալի բան ունէին. այս մարդն ինձ համար հազար անգամ աւելի տանելի կը լինէր, եթէ իր պաշտօնին, իր ստոր դերին համապատասխան կոպտութիւն ունենար։ Բնազդական գարշանք էի զգում դէպի այդ վայելուչ ձևերը, դէպի այդ արուեստական ժպիտը, այդ զգոյշ, գրեթէ երկիւղած շարժումները—նենգ դաւը աւելի կոկւած, աւելի պատրիչ արտաքին չէր կարող ունենալ։ Եւ այդ դաւը ես յստակօրէն տեսնում էի նրա աչքերի մէջ, այդ ապակէ, պաղ բիբերի վրայ, որոնք ճնում էին անշարժ ու անմասն այդ ժպիտների արուեստականութեան, շարժումների կեղծ վայելչութեան, ձայնի բռնադատօրէն անուշ ելևէջների. այդ երկու բիբե՛րը, թունաւոր օձի զոյգ աչքե՛ր...

Ես աշխարհում չը գիտեմ ոչինչ աւելի զզրելի, քան ռուս ժանդարմի աչքերը։

Դրսից տունս շրջապատուած էր կօզակների, ոստիկանների, լրտեսների մի ամբողջ ջոկատով։ Ներսում՝ գիշերւայ ժամը երկից անց՝ սկսւեց կատաղութեան օրգիան, վայրագ խրախճանքը մարդկային անարգւած արժանիքի, խորհող բանականութեան վրայ. սկսւեց անասնօրէն բութ և շնականօրէն անպատկառ աւերածը մի յարկի, որի տակ տնքում, նվվում էր մի հիւանդ երեխայ, և ուր հսկում էր կատարում իմ ծերացած, իմ խիզճ հոգին, խոկալով տիեզերական հսկայ չարիքի վրայ։

Հիւանդ փոքրիկս դադարեց նվվալուց, յետին ճիգերը հաւաքեց ու նետւեց դէպի ինձ. նա դողդոջում, վախենում էր սրերի, կօճակների, ուսագիրների փայլից, ոստիկանների բիրտ ոտնաձայներից, դաւադիր, նենգ աչքերից, որոնք պրպտում, պլծում էին տանս բոլոր անկիւնները։

Պահարաններից, արկղներից, սեղանների վրայից թափեցին յատակի վրայ բոլոր ձեռագրերս, թղթերս, նամակներս ու գրքերս. և տղէտ, բիրտ ոստիկաններն իրենց լպրծուն, աղտոտ ձեռներով սկսեցին մէկիկ-մէկիկ քրքրել այդ բոլորը ու մեկնել իրենց գլխաւորին։

— Այս ի՞նչ գիրք է, այս հաստը,— փոխ-գնդապետը շեշտեց „հաստ“ բառը։

— Պատմական վէպ է, հայոց անցեալից, հեղինակն է Բաֆֆի, որ մեռած է քսան տարի առաջ. վէպը կոչւում է „Սամուէլ“։

— Հը, ը՛մ... քսան տարի առաջ... և դեռ կարդում են, վերցրէք այս գիրքը, „այնտեղ“ կը տեսնենք, հրամայեց նա ստորադրեալին։

„Այնտեղը“ ժանդարմական վարչութիւնն էր։

— Այս ի՞նչ է կարմիր շապկով — նա շեշտեց այս անգամ „կարմիր“ բառը։

— Կարմիր շապկով այս գիրքը պատասխանեցի, կոչւում է „Խեղճեր“, հեղինակութիւն Ա. Ահարոնեանի. պատմւածքների ժողովածու է, հրատարակւած Թիֆլիսում Նոյիսկ Գօլիցինեան ռէժիմի տակ, գրաքննիչի արտօնութեամբ 1903 թւին. հաճեցէք նայել թւականին։

Նա գիրքը շուռ ու մուռ տւեց, անտարբեր կերպով թերթեց։

— Այո՛ „Խեղճեր“.. մոմաց նա քթի տակ, վերցրէք, այնտեղ կը տեսնենք, պատւիրեց նա կողքը կանգնած ժանդարմին. գիրքը նետւեց պատրաստւած պարկի մէջ Բաֆֆի „Սամուէլի“ վրայ։

— Իսկ ա՞յս...

— Ֆրանսերէն է, կարող էք կարդալ։

— Ֆրանսերէն չգիտեմ, և պարտական չեմ։

— Ը՞նանի հեղինակութիւնն է, „Ցիսուսի կեանքը“։

— Ա՛յ, ա՛յ, ա՛յ, լսել եմ... վերցրէք այս գիրքը...

Եւ Ը՞նանը նոյնպէս մտաւ ոստիկանի պարկը։

—Ապա ա՞յս երկուսը։

— Հոմերոսի Ոդիսական և Իլիականի հայերէն թարգմանութիւն, տպուած Վենետիկ։

— Վերցրէք, հրամայեց նա ստորագրեալին։

— Այս ի՞նչ է, այս հաստ գիրքը։

— Ճամբորդական տպաւորութիւններ Իտալիայից, հրատարակուած Թիֆլիսում, հեղինակութիւն Ա. Ահարոնեանի։

— Ճամբորդութիւն Իտալիայո՞ւմ... հեղինակը բաւական շրջել է. նա ժպտաց Նենգօրէն... լաւ երկիր է Իտալիան ասում են... այո, Հռոմն այնտեղ է... Վենետիկը... հը՛մ, հը, ը՛հը... պատկերներ էլ կան, ո՞ւր են պատրաստուած...

— Հաստատ չգիտեմ, բայց կարծեմ Ժընևում։

— Ժընևո՞... վերցրէք այս գիրքը էս, կը տեսնենք „այնտեղ“։

Անկազմ գիրքը յանկարծ. վար ընկաւ ոստիկանի ձեռքից, թերթերը ցրիւ եկան, պատկերները փուեցին յատակին. պրիստաւի հէնց կրունկի մօտ „Աստուածածինը մեռած Քրիստոսը ծնկներին“, քիչ այն կողմը „Մովսէսը“, երբ տասնաբանեայ պատիրանների տախտակը ձեռքին՝ իջնում է Սինայից և հեռուից տեսնում է ոսկէ հորթի շուրջը անասնացած ամբոխը. զինուորի հրացանի մօտ ընկած էր պատանի Դաւիթը, որ շեշտ հայեացքը Գողիաթին յառած՝ ցած է բերում պարսատիկը իր ուսից. բոլորն էլ Միքէլ-Անջելօի գործեր։ Զինուորը հրացանի կոթով մօտեցնում էր Լէօնարդօ-դա-Վինչիի, Բաֆայէլի, Մ. Անջելօի նկարները, մինչդեռ ոստիկանը անքալով, դժկամակելով հաւաքում էր բոլոր և ճխրտելով ներս էր ածում պարկը։ Մաքի և արեւստի այդ տիտանները, որոնք դարեր շարունակ ճշմարիտն ու բարձրագոյն գեղեցկութիւնը ասացին մարդկութեանը, վերստին որպէս անպատիւ յանցաւորներ գնացին ռուս օխրանայում իրենց գոյութեան իրաւունքը պաշտպանելու։ Տխրութեամբ ու ցաւով մտածում էի, որ XX-րդ դարն իսկ ոչինչ, ոչինչ չբերեց այս դժբախտ, այս խաւար Ռուսաստանի համար, ուր իշխում է տակաւին միջնադարեան ամենէն ծանր, ամենէն խեղդող մղձաւանջը։

Ծանր խոհերից ինձ վերստին սթափեցրեց փոխ-գնդապետի ձայնը.

— Այս ի՞նչ գիրք է, կէսն էլ ֆրանսերէն։

— Սա „Մովսէս Խորենացին“ է, հայ պատմագիր V-րդ դարու. թարգմանուած բոլոր քաղաքակիրթ ազգերի լեզուներով, անգամ ռուսերէն. հրատարակուած է Վենետիկ։

— Հայ պատմագի՞ր... հը՛... ը՛մ... այդ մենք կը տեսնենք „այնտեղ“...

Եւ հազար չորս հարիւր տարի առաջ թշնամիների ձեռքից հալածական մեծ ծերունին, հանճարեղ քերթողահայրը՝ XX-րդ դարում տարուեց ռուս ժանդարմական վարչութիւնը այնտեղ վերստին ասելու համար.—

„Դատաւորք տմարդիք, սուտք, խաբողք, կաշառառուք, անընտրողք իրաւանց, անհաստատք, հակառակողք... Հէնք եկեալ անհատք և յոլովից կողմանց, գերփումն տանց և յափշտակութիւն ստացուածոց, կապումն գլխաւորաց և բանդք յայտնեաց, յօտարութիւն վտարումն ազատաց և անթիւ նեղութիւն ռամկաց“...

Զսպուած զայրոյթս պոռթկաց.

— Պարոն փոխ.-գնդապետ, ասացի, եթէ տասնևչորս դար առաջ ապրած պատմագիրը այս աստիճան վանդաւոր, այսքան սարսափելի է ռուս պետութեան ամբողջութեան համար, ապա շտապեցէք վերցնել և՛ այս, և՛ այս, և՛ այս... ու իրար յետևից շպրտեցի առաջը Եղիշէն, Ղազար Փարբեցին, Եղնիկը,—սրանք բոլորն էլ, աւելացրի ես բարկութիւնից կերկերուն ձայնով, չափազանց վտանգաւոր գրքեր են, բոլորն էլ գրուած են նոյն կասկածելի ժամանակներում՝ մեզանից տասնևչորս դար առաջ։

Փոխ-գնդապետը գունատուեց, գրքերը թողեց, ոտքի ելաւ լռութեամբ, ապա դառնալով ստորագրեալներին, պատուիրեց.

— Հաւաքեցէ՛ք բոլորն՝ ինչ տեսնում էք այստեղ, լցրէք պարկերը և փոխադրեցէք ժանդարմական վարչութիւն։

Գրքերի ու ձեռագրերի ճակատագիրն այսպիսով վճռուած էր. ես անզօր եղայ փրկել նրանց այս բարբարոսների ճանկերից, սկսեց միւս սենեակների խուզարկութիւնը։ Բոլոր պահարանները դադարկուեցին, զգեստ ու սպիտակեղէն, ճաշասեղանի պարագաներ, անկողիններ, սփռիչներ, բոլորը, բոլորը թափուեցին յատակի վրայ. ապա անցան խոհանոց, նկուղ, սպասաւորի սենեակ, ամեն տեղ, ուր մի աման, մի տաշեղ, մի թել կար, սողոսկաց ժանդարմի, ոստիկանի, լրտեսի ձեռքը։

Ես այլ ևս չէի նայում, չէի հետևում նրանց արածներին, տեսարանը չափազանց նողկալի էր. ես լռութեամբ խմում էի դառնութեան բաժակը և հոգուս մէջ կուտուում, ամբարւում էր ահագին վիշտն ու ցասումը մարդու համար. թշուառ ու սարուկ, երբ հզօրի առաջ է, ահարկու գազան, երբ իշխանութիւն ունի։

Խուզարկութիւնը տեւեց չորս ժամ. լուսաբաց էր արդէն. պատուհանների ապակիները մեղմիւ շառագունեցին։ Դարձեալ արշալոյս էր, դարձեալ արևը պիտի ծագէր ու պիտի լուսաւորէր ամենքին, ամենքին գայլ, բորենի, շուն, անգամ այս Բօլշինսկին իր ճիւաղային վոհմակով պիտի ծծէին նրա ժպտուն շողերը, ինչպէս բոլոր դարերի, բոլոր աշխարհների ոճրագործները։

Ցունս աւերակ էր. արևն այնտեղ էլ ժպիտ չունէր.

այդ ժպիտը խամրեց „յանուն օրէնքի“. ինձանից աւելի դառնացած էր փոխ-գնդապետը. նա յուսախաբ էր. այդքան թուղթ ու ձեռագրերի, այդքան նամակների մէջ չգտաւ ո՛չ մի յեղափոխական փաստաթուղթ, գիրք, կոչ, այնուամենայնիւ իր պաղ բիբերը վրաս յառած, ասաց գոհութեամբ.

— Այժմ դուք բանդ պիտի առաջնորդուիք.

— Գիտեմ.

— Գիտէ՞ք.

— Այո՛.

— Ո՞րտեղից գիտէք...

Ես չպատասխանեցի և մեր հայեացքները հանդիպեցին իրար...

Եւ վշտի ու հեգնանքի ժպիտը շրթունքներիս, ոստիկաններով շրջապատուած, քայլում էի ամայի փողոցներով դէպի ժանդարմական վարչութիւնը։ Այստեղ, մի մութ ու խոնաւ ներքնայարկում ես գտայ բազմաթիւ ծանօթներ ու ընկերներ։ Մենակ չէի, այդ գիշեր բազմաթիւ խուզարկութիւններ ու ձերբակալութիւններ էին տեղի ունեցել Թիֆլիսի հայ մտաւորականների շրջանում։ Եւ ամեն տեղ հրահանգիչն ու զեկավարը եղել էր նոյն Բոլշինսկին, դժբախտ, արիւնլուայ Լեհաստանի այս անարժան զաւակը։

Պէտք եղաւ 6—7 ժամ առանց կերակրի, զինուորներով շրջապատուած և լռութեան դատապարտուած սպասել խաւար, խոնաւ, գարշահոտ նկուղում, մինչև որ մեզ մէկիկ-մէկիկ կը կանչէին նախնական ձևականութիւնները կատարելու։ Այստեղ կազմւում էր մեր համառօտ կենսագրութիւնը և մեր ցեղագրութիւնը։ Գրի էին առնում նաև մեր մօտաւոր ազգականների անունները, հասարակական դիրքը, բնակավայր ու հասցէ։ Այս բոլոր ձևականութիւնների մէջ ամենէն նուաստացուցիչը, որ կարող է ըմբոստացնել նոյնիսկ ամենախաղաղ, ամենասառնարիւն խառնուածքը, դա մարդաչափական գործողութիւններն են. սովորական ոճրագործներին վերապահուած այս անարգ ձևականութիւնը ժանդարմական վարչութիւնը գիտաւորեալ կերպով գործադրում է քաղաքական կալանաւորների վրայ, նրանց վիրաւորելու, անարգելու համար։

Լայն կրծքով, բութ ճակատով և ներքինու դէմքով մի մարդ, հեգնօրէն քաղաքավարի, չափում, չափչփում էր մեզ, լուսանկարում էր մի քանի ձևով, և վերջում նրա պահանջով մենք ստիպուած էինք սև մուրի մէջ թաթախել մեր մատները, մեր ամբողջ ձեռքը թղթերի վրայ դրոշմելու համար։

Եւ այսպէս վիրաւորուած, անարգուած, ինչպէս յետին ոճրագործներ, մենք դառնացած հոգով, դուրս եկանք այն որջից, որի անունն էր ժանդարմական վարչութիւն և գոհ էինք, երբ պատրաստում էին մեզ վերջապէս բանդ առաջնորդել։ Մեզ սպասում էր սակայն աւելի ծանր փորձութիւն. մեր խնդիրը կառքով բանդ գնալ, հեգնօրէն մերժեցին։ Պէտք էր կէսօրից յետոյ ժամը 2-ին, գարնանային մի պայծառ օր ոտքով անցնել մեծ քաղաքի բազմամարդ փողոցներով, շրջապատուած պահակներով։ Այդ էլ վնաս չունէր. բայց բանդ առաջնորդելու համար մեզ յանձնեցին կանխաւ հարբեցրած կօզակների մի բիրտ, վայրենի խմբի։ Եւ ժանդարմական վարչութիւնից մինչև բանդ՝ մենք—թւով 10—15 հոգի մտաւորականներ — քշւում էինք հալածական, հևիհև, հրացանի կոթը միշտ պատրաստ թիկունքներիս իջնելու, և հայհոյանքի տարափը մեր գլխներին։ Մենք չէնք քայլում, այլ վազում էինք, վայ նրան, ով սայթաքում էր սալայատակի կոշտ քարերի վրայ, ով նայում էր այս ու այն կողմ, ով մի խօսք էր շշնջում իր ընկերոջը։ Բարբարոսաբար ժանդարմական տանը մենք շուտ հասկացանք—կօզակներին հարբեցրել էին դիտմամբ, մեզ շտապեցնում, վազցնում էին դիտմամբ, մեզ անարգում, վիրաւորում մեր իսկ բնակավայրում, մեր բարեկամներ ազգականների, մեր ընտանիքների աչքերի առաջ դիտմամբ։ Նպատակը պարզ էր—որևէ դիմադրութիւն, ըմբոստութեան որևէ շնչին արտայայտութիւն և արիւնը պիտի հոսէր։ Մենք գիտէինք, որ այդպէս են կոտորել բազմաթիւ կալանաւոր խմբեր ժանդարմական վարչութիւնից մինչև բանդ։ Գիտէինք և զգուշացանք. ծայրայեղ զգաստութիւնը մեզ փրկեց։ Կօզակների վայրագութիւնը մնաց անպատասխան, քայլեցինք հապճեպով, հևիհև և երջանիկ էինք... երբ հասանք բանդ, առանց փորձանքի։

Բանդային գրասենեակը, ուր մենք ներս ընկանք այս խելագար վազքից յետոյ, մեզ համար մի փրկարար ապաստան էր։ Այստեղ, գրասենեակի մի ծերուկ ծառայող, երբ տեսաւ հարբած կօզակների այս վայրենի խումբը, նրանց կարմրած, բորբոքուած դէմքերը, այս կատաղի, արիւնկալած աչքերը, մի վայրկեան գրիչը վար դրեց, նայեց, տխրութեամբ օրօրեց գլուխն ու ասաց կամացուկ.

— Մեծ, շատ մեծ վտանգից էք ազատուել, հրաշք է, որ այս վայրենիները ձեզ չեն կոտորել...

ՏԱՐԱԳԻՐ

ՆԱՄԱԿ ԵՐԿՐԷՆ

Կարին, 14 ապրիլի

Թիւէս 10—12 օր առաջ, Երզնկայի մէջ, Սարգիս Գաղանճեանի տանը անզգուշութիւնից ռումբ է պայթում և քանդում թէ Սարգսի և թէ նրա հարևանի տունը։ Ոստիկանութիւնն անմիջապէս ներս է խուժում, խուզարկութիւն և քննութիւն կատարում, փլատակների տակից հանում է Սարգսի և երկու այլ հայերի դիակները, մի քանի զէնքեր և ուրիշ պայթուցիկ նիւթեր։ Այդ դէպքը աւելի ուռճրած ձևով, Օսմանեան Հեռագրական Գործակալութիւնը հրատարակում է, մի քիչ էլ տենդենցիոզ

բնաւորութիւն տալով Նրան... իրբ ապացոյց Հայ տարրի անվստահութեան և կարծես թէ տրամադիր էր այդ մասնաւոր դէպքը վերագրելու հրապարակի վրայ յայտնի Կազմակերպութեան։

— „Հայերը ռումբեր են շինում, հայերը ապստամբութեան են պատրաստւում, պայթուցիկ և այլ ռազմամթերք են ամբարում“ եայլն։ Այս և սրանց նման սենսացիոն լուրերը չափազանցրած ձևերով հոլովւում էին Թիւրքերի մէջ։

Բարեբախտաբար, Կարինի կուսակալութիւնը—կենտրոնից եկած յատուկ հրահանգով—ազդարարեց „Ցառաջ“ուս, որ „Երզնկայի պօմպայի պայթիւնը մասնաւոր անհատների գործ է, որոնք մասնաւոր շահեր կը հետապնդեն և ոչ մի կապ չունին ընդհանուր հայերի և կազմակերպութիւնների հետ“...

Այդ ազդարարութիւնը, մեր կարծիքով, կառավարութեան խելացի քայլերից մէկն է. պէտք է ափսոսալ, որ նման ազդարարութիւնները յաճախ չեն կրկնւում մեր երկնքի տակ։

Որքան որ զգոյշ, շրջանկատ տակտիկի է հետևում Կարինի կուսակալութիւնը իր խելացի ազդարարութիւններով և շատ թիւրիմացութիւնների առաջը ժամանակին կարողանում է առնել, նոյնքան անտակտ, սանձարձակ և ամբոխի վայրենի բնազդները գրգռող երեւոյթներ է ստեղծում չեղած տեղից՝ Վանի կուսակալ Իզզէթ բէյը։

Առանց քաշելու, նա օրը ցերեկով ժողովներ է գումարում քիւրդ աշիրէթների հետ և աշխատում է ամեն կերպ սիրաշահել նրանց։ Անցեալներում կառավարութիւնը պաշտօնապէս զինել էր յայտնի աւազակապետ Շէյխ Սայիդ Ալիի 800 հոգուց բաղկացած հրոսախումբը և Բաղէշից դէպի Վասպուրական ճամբել։ Այժմ էլ լսում ենք, որ նոյն կառավարութեան ներկայացուցիչ Իզզէթ բէյը, 100-ի չափ հրացան և համապատասխան ռազմամթերք է ուղարկել Շէյխ Սայիդ Ալիին, իր ձեռքի տակ „անզէն“ քրդերին զինելու և հայերի հաւանական (sic!) ապստամբութեանը դիմագրաւելու համար։

**

Հայերի դրութիւնը Բաղէշի կուսակալութեան մէջ աւելի վտանգաւոր ու լուրջ կերպարանք է ստացել վերջին օրերս։ Ահա թէ ինչ է գրում մեր վստահելի ընկերներից մէկը. — „Ուրբաթ, մարտ 29-ի գիշերը, անյայտ մարդկանց ձեռքով դաշոյնի հարուածներով վիրաւորւում է քաղաքիս Գոմաց թաղեցի Թիւրք Մուղդատը, որը նոյն գիշերն էլ մեռնում է։ Դէպքը տեղի կունենայ հետևեալ պարագաների մէջ։ Գոմաց թաղի գետեզրին գտնւող մի այրի մէջ Մուղդատ անուն Թիւրքը կը բռնաբարէ Պարէտ անունով 15—16 տարեկան մի Հայ տղայ։ Անյայտ մարդիկ վրայ կը հասնին ու յանցանքի տեղում, դաշոյնահար կանեն բռնաբարող Թիւրքը։

Հետևեալ օրը, Թիւրք ամբոխը Մուղդատի դիակը կը տանէ կառավարութեան դուռը և հայերից վրէժ կը պահանջէ։ Երբ կառավարութիւնը հանգամանքներու հետ ծանօթանալէ յետոյ կարևորութիւն չի տար ամբոխին, համարելով այն մասնաւոր դէպք, կատաղած ամբոխը կը յարձակի հայերի տների վրայ, ապակիներ, դռներ կոտրտելուց յետոյ՝ կը վիրաւորէ հանդիպող հայու մը, Նրա կնոջն ու մօրը։ Դրանով էլ չբաւականանալով, նրանք խմբեր կազմած կը յարձակին պատահող և իրենց ճանկն ընկնող հայերի վրայ ու կը վիրաւորեն քանի մը անմեղ հայեր։ Բարեբախտաբար Գրիգոր Լուսաւորիչի տօնի առիթով շուկան գոց կըլլայ, ապա թէ ոչ խուժանային սանձարձակութիւնը լայն ու վտանգաւոր չափերի կրնար հասնիլ... Վիրաւոր հայերէն 3-ի դրութիւնը վտանգաւոր է. բռնաբարուած Պարէտը ձերբակալուած է, իսկ Թիւրք ամբոխը տակաւին կըսպառնայ հայերուն։ Շուկան փակ է, հայերը կը վախնան փողոց դուրս գալ։ Հանրագրութեամբ մը բողոքած են պատրիարքարան և կուսակալին։ Սպանուած Թիւրքի հայրը զինուած կը պտտէ հայերու թաղերը և կառավարութեան աչքի առաջ կըսպառնայ սպանել առաջին հանդիպող հայը։ Գոմաց թաղի ամբոխավարները կ'աշխատին ընդհանրացնել, բարեբախտաբար չեն աջողիր։ Թիւրք ամբոխի յուզումնքը տակաւին չէ անցել. առ այժմ լուր չունինք, թէ ի՞նչ ազդեցութիւն թողած է քաղաքի դէպքը շրջակայ գիւղերուն մէջ...

Յայտնի է, որ Բաղէշի կուսակալութիւնը քրդերով բնակեցրած ամենախիտ նահանգն է՝ հայկական բարձրաւանդակում։ Ամենակատաղի աշիրէթապետներն ու կիսանկախ քրդական ցեղերը այդ շրջանումն են բուն դրել։

Քրդական շարժման նշանաւոր պարագլուխներից մէկը — Բեդր-Խան բէկի շառաւիղ Հիւսէին փաշան — այդ շրջանի մէջ գրեթէ մի անկախ իշխանի իրաւունքներ է վայելում և կառավարութիւնը հազիւ թէ յանդգնէ նրան հակառակ քայլ անելու։

Մեր ստացած վերջին տեղեկութիւններից երևում է, որ քրդերը լուրջ շարժման նախօրեակումն են։ Յամառ կերպով լուրեր են պտտւում, որ նրանք հրաժարւում են ոչխարի վրայ դրուած պետական հարկը վճարելու։ Պահանջում են այսուհետև գլխահարկ չվերցնել, աշար կոչուած հարկը 10-ից մէկ ստանալ և ոչխարին էլ 50 փարայ։ Կառավարութիւնը սկզբից զօրք էր ուղարկել քրդերի դէմ. այսօր էլ գնաց, վաղն էլ սպասւում են Մուշից թնդանօթներ, որ նորից ճամբայ հանեն քրդերի դէմ։ Սակայն կառավարութիւնը իր այդ վարանոտ քայլը աշխատում է ամեն կերպ ծածկել և գաղտնի պահել ժողովրդից։ Թւում է թէ ինքն էլ չի հաւատում իր քայլի յաջողութեանը։

„Քրդական շարժումը լուրջ կերպարանք է ընդունել մեր կողմերում — գրում է Սղերդի մեր թղթակիցը — կառավարութիւնը մի կողմից գաղտնի զօրք է ղրկում,

միւս կողմից՝ խաղաղ միջոցներով ուզում է շարժման առաջն առնել, նրանց խաթրին չդիպչել։ Այդ երկդիմի քաղաքականութեան արժէքը, սակայն, իրենք քրդերը շատ լաւ գիտեն և գիտակցում են իրենց արած քայլը։ Հետզհետէ մտքերը կը լարուին, խնդիրը կը բարդանայ և գուցէ հեռու չէ այն օրը, երբ մենք ականատես կը լինենք աշկարայ ընդհարումների՝ քրդերի և կառավարութեան միջև։

Սենսացիօն լուրերը մէկը միւսից գունեղ, ուռուցիկ, շարունակ գալիս հասնում են մեզ։ Լսածներիցս վերապահութեամբ հաղորդեմ այն, որ իբր թէ Մուշից դէպի Բաղէշ տանող ճանապարհին, քրդերը զինաթափ են արել կառավարական մի բէօլիւկ—մօտ 250 հոգի...

Այնքան շատ ու յամառ լուրեր ենք ստանում այս ու այն կողմից քրդական շարժման մասին, որ ակամայ ստիպուած ենք հաւատալ...

***

Վերջին պահուն Վանից նամակ ստացայ, որի մէջ հետևեալ նորութիւնը կայ.—„Անցեալ ուրբաթ, մարտ 29-ին, Նորաշէն եկեղեցիին քով, Ա. Թերզիբաշեանի բնակարանի դիմաց, երկու կենսալի, երիտասարդ կեանքեր—Խաչիկ Կարմիրշալեան և Խերան—զոհ գնացին անյայտ ոճրագործներու գնդակին։ Ոճրագործներու ո՞վ ըլլալը անյայտ է, բայց դատելով Թերզիբաշեանի գրած սպառնական նամակէն, կարելի է պնդել, որ չարագործները դրամաշորթներ են։ Ժողովուրդը ճնշող տպաւորութեան տակ, խուռն բազմութեամբ հողին յանձնեց զոհերու դիակները։ Ա. Վռամեան մի զգացած, մտրակող դամբանականով երիտասարդներու վրայ պարտականութիւն դրեց գտնել ոճրագործները և պատժել“։

Կարին, 5 մայիս

Քրդական շարժումը սկսում է նաև Մուշի, Վանի արևմտեան գաւառներում — Կարկառ, Մոքս, Խիզան։ Այսօր իսկ հեռագիր ստացանք, որ Քղիի մօտ քրդերը խմբովին յարձակուել են հայ գիւղերի վրայ և առ այժմ բաւականացել են գոմերն ու մարագները կրակի մատնելով։ Դժուար է գուշակել, որ վաղը այդ շարժումը լայն ծաւալ է ստանալու, քանի որ առիթներն ու դրդիչները անպակաս են։

Ձերբակալութիւններն ու խուզարկութիւնները ծայր են տալիս ամենուրեք։ Խուզարկութիւններ են տեղի ունեցել Վանում, Մուշում և Երզնկայում՝ Երզնկայի ռումբերի առիթով։

Երեք օր առաջ այստեղ էլ, Կարինում, չտեսնուած աղմուկով ու իրարանցումով խուզարկութեան ենթարկուեց տեղիս յայտնի վաճառական և քաղաքական ժողովի անդամ մշեցի Վահան Միրիջանեանի բնակարանն ու գրասենեակը։ 4 5 ժամ շարունակ մանրազնին խուզարկելուց և ոչինչ չգտնելուց յետոյ, Վահան Միրիջանեանին ձերբակալեցին ու խիստ հսկողութեան տակ 24 ժամ բանտարկելուց յետոյ արձակեցին։ Դրա տան խուզարկութիւնն ու ձերբակալութիւնը հետևանք է Մուշի միւթէսարիֆի հեռագրի, որով յայտնում է, որ Մուշի մօտ, Վարդենիս գիւղում մի հայ ջորեպան Մնջոյի մօտ, բեռների մէջ զէնք է գտնուած և որ այդ ջորեպանն, ի միջի այլոց, տանելիս է եղել նաև Վահան Միրիջանեանի ապրանքները։

Այդ խուզարկութիւնն ու ձերբակալումը ճնշող տպաւորութիւն են թողել տեղիս հայ ազգաբնակութեան վրայ։ Յամառ կերպով խօսում են, որ խուզարկութիւններ և ձերբակալութիւններ պիտի կատարուին մի շարք ուրիշ հայերի մօտ ևս։

Բոլոր նշաններից երևում է, որ եկող գարնան կամ ամառուան ամիսները անարիւն չեն անցնելու...

ՅԱՐ-ՀԱՏ

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ ԱՆԳԼԻԱԿԱՆ ՊԱՐԼԱՄԵՆՏԻ ՄԷՋ

Մայիսի 8-ին Համայնքների պալատում՝ երկու երեսփոխաններ—Անտամ Բրայս և Օ'Կոննոր—հարցապնդում արին հայկական խնդրի մասին։ Նկարագրելով Թիւրքահայաստանի մէջ ստեղծուած տագնապը և յիշատակելով Մեծ Բրիտանիայի յատուկ պարտաւորութիւնները հայերի նկատմամբ, երկու պատկառելի ճառախօսները մատնացոյց եղան հայոց հարցի լուծման եղանակի վրայ և շեշտեցին, որ Հայաստանի բարենորոգումները հնարաւոր են միայն եւրոպական երաշխաւորութեան ու հսկողութեան տակ։ Կառավարութեան կողմից Ակլանդ որոշ ու կատեգորիկ ձևով յայտարարեց, որ խաղաղութիւնը կնքելուց, բալկանեան կնճիռները լուծելուց յետոյ, Անգլիան պիտի յարուցանէ հայկական խնդիրը և պիտի աշխատէ—միւս պետութիւնների հետ ձեռք ձեռքի տուած—լուծել այն՝ երկու երեսփոխանների ցուցադրած ձևով։ Ինչ վերաբերում է ներկային, անգլիական կառավարութիւնը ամենախիստ ազդարարութիւններ է արել և կը շարունակէ անել Բ. Դրան՝ առաջն առնելու հակահայկական խժդժութիւնների։

ՆԻՒԹԱՏԻՊԱՆՈՒԹԻՒՆ

Արեւմտեան Բիւրօն ստացած է՝

Նէր Մ. Նորատունկեանէ՝ իր եղբօր մահուան առթիւ՝ 50 մր.։

«Հարտ»ի Շրջանային Կոմիտէն՝

Հեսեւեալ գիւղերու խումբերէն.—Ջրեղջի Եռանդ խմբ. 62 դահ. 25 փ., Ինճակուճի Սպառազէն 82. 20, Աւերակի Սուրբ-խաչ 82, Բլրակի Մսկարեան 30, Պայծառի Բլեջան I 33, Բողազլեասանի Լուսին 25 Դեսափի Ծաղիկ 30 20, Պալի Արշալոյս 61. 20, Ֆէրզինի Կայծակ 15, Դեսապոյտի Գէորգ 76, Նռախիջեւանի Կայծակ 37. 20, Ծորուհարթի Փոքորիկ 34. 20, Հայաբնակի Եռանդ 53. 20, Բրդաբէնի Մուղիկ 51. 30, Ծմակի Աղոտ 10. 20, Պայծառի Բլեջան II 18, Պայծառի Արծիւ 22, Բաշի Սարգիս 30, Ովասիսի Մարնիկ 5 դահ։

Ազգահարցնիրի Կոմիտէն՝

Նորաշէնի Վրէժ խմբ. 11 դահ., Դարագլուխի Մրրիկ 25. 10, Կարմիրի Ազատ 24. 10 դահ.։